Ա Ր Ա Ր Ա Տ

Թիւ Զ. — ՇՐՋԱՆ ԺԸ. 1885 ՏԱՐԻ ԹՒ. ՅՈՒՆԻՍ 30.

ԿՐՕՆԱԿԱՆ

ԾԱՆՕՒԿ ՄԵՂՔԵՐ.

(Ա–ԵՓ. ՄԱՓ. 19. 26.)։

—

Մի՛ քոյր լինձ քո երեսիդդ, տո՛ւր լինձ քո հոգիդդ, որ լինձ սորվեցնի. և հաստատո՛ւր իմ մէջս սուրբ հոգի, որ ես միշտ քո ճանապարհդ ընտրեմ։ Նաև երբոր լինձ կըծածկի դիշերին ու խաւարը, հանւտատրմութեամբ և սիրով քո օրէնքդ պէտք է կատարեմ. Քո դատաւորական միշտ բաց և արթուն աչքիդ առաջն ամենածածուկ բանն էլ պէտք է յայտնուի։

—

Յիսուս Քրիստոս մեր Փրկիչն ասաց. «Ոչինչ գոյ ծածո՛ւկ՝ որ չըյայտնուի, և ո՛չ ինչ գան ներքո՛ւն՝ որ չիմացուի»։

Ամուսնացեալին խօսքի այս տունն, երբ որ կարդումէ մարդս՝ ինչպէս սիրտ շարժի ու ցնցի իրան. ինչպէս սորա՝ նորա երեսը կարմրումէ ամօթից, ինչպէս այս՝ այն մարդու երեսի գոյնը թըռչումէ այս խօսքերը կարդալուց յետոյ, ծանր ու խոր մտածմանց մէջ ընկնելո՛վ. որովհետև այդ խօսքերը սարսափելի ճշմարտու-

թիւն են. ամեն մի օրուայ փորձն, ամեն մի ամնուայ մէջ պատահածներն, ամենայն դարերի ընդհանուր պատմութիւնն անդիմադրելի ուժով այդ խօսքերի վկայութիւններն են:

Ի գիր՝ տուն կրակ քցողն գիշերուան մութին, երբ որ նորան ոչ ոք չէ տեսնում, սողոսկեց ներս և սարսափի ու աւերածի ալիքները վեր բարձրացրեց. այո՝ թէև արեց իւր չարագործութիւնը, բայց այդ կրակ ընկած տան զարհուրելի ալիքները վեր բարձրացան դէպ ի երկինքը, մի վրէժխնդրութեան սրի նման, և փախչող չարագործի ծածուկ հետքերը լուսաւորեցին: Ի գիր՝ կամաց մօտեցաւ թունաւորողն, իւր սպանութիւնը գլուխ բերելու համար. մեռած դիակը, կարծես, լեզուի եկաւ՝ ու բացեց, յայտնեց սպանութիւն գործողի յանցանքը. նորան հեռու աշխարհներից յետ բերեց, որ գայ դատաւորի առաջն՝ իւր յանցանքը խոստովանի: Ի գիր՝ սուա երդում՝ ուտողը հանեց իւր բերանից Աստուծոյ անունն, ու մտքից անցկացրեց թէ՝ ով կարող է իմ խարդախութիւնս ցոյց տալ ու ինձ գարշելի ու անպիտան մարդ ճանաչեցնել, որովհետև մեռնողի լեզուն էլ չէ խօսում: Տարերքը լեզու ստացան, անկենդան մարդը խօսեց կմկմալով ու յայտնեց իւր դէմ՝ եղած չարագործութիւնն:

Ո՛չ ամենախելօք մարդու օրամտութիւնն՝ ոչ ամենազօրաւոր մարդու ոյժն ու զօրութիւնը կարող են ընդ միշտ ծածկել աշխարհի առաջ մի անիրաւ գործ: Մարդկային ապրի վիճակների մէջ կանգնած է վրէժխնդրութեան ահաւոր հրեշտակն, և հատուցման աներևոյթ ձեռքն ապագայի վարագոյրը քաշ է անում:

Ի գիր աշխարհիս մեծերն ասացին՝ իրաւունք և իշխանութիւն ունինք անելու՝ ինչ որ մեր սիրտն է ուզում. ով կարող է մեր դէմ վատ խօսել: Ի գիր զինաւորուեցին նոքա իրանց վարհուրեցնող երկիւղովն, որ ոչ ոք չըհամարձակի իրանց անիրաւ գործերն անիրաւ ասել, որ մարդիկ լռեն իրանց չարագործութեանց մասին, կամ գովեն իրանց մեղութիւնները: Բանտով ու շղթաներով, չարչարանքներով ու մահուամբ կարողացան նոքա համարձակ մարդուն սանձել: Բայց մարդուս մտաւոր աշխարհին չըկարողացաւ հասնել նոցա իշխանութեան ջախջախ գաւազանը. կամաց կամաց պտոյտ էլին գալիս բաղմութեան մէջ և այս ականջից այն ականջ հասնում անարգական խօսքերն ու նզովքը իրանց վերայ: Ի գիր նոքա կեղծաւորների ու շողոքորթների բերանով

իրանց փայտը քարոզել ու հուչակել տուին. մի ուրիշ ձայն իրանց սրտի մէջն ասում էր. ինչ ուզես, արա, բայց և այնպէս դու գարշելի մարդ ես։—Ի զուր նոքա յիշատակի մարմարեայ արձաններ կանգնել տուին. արհեստական քարակոյտն իրանց գոյութեան ամնթի և նախատանաց սիւնը դարձաւ։ Նոցա քարեայ պատկերների քարացած ստէն արտասուքներն էին միակ արտասուքներն, որ տեսնուեցին իրանց մահուան ժամանակ։ Նոցա մահուան վերայ թափուած նզովքները գնում՝ անցնում են ազգաց տարեգիրների մէջ մինչև իրանց վերջին սերունդը, որ զգուշացնեն նման վատ գործերից։

Ծառուկ անարդարութիւնների վերջապէս բացուելուց ու յայտնուելուց չեն կարողանում պաշտպանել՝ ոչ աղքատութիւնն ու սուր վիճակը, ոչ իշխանութիւնն ու մեծութիւնը, ոչ խորամանկութիւնն ու անպատկառութիւնն։ Աստուծոյ ամենակարող ձեռքն է, որ ամեն բան կարգադրում է և նորա ձեռքի թեթև շարժումից միակերպ կախում ունի մուրացկանը՝ իւր ճանապարհի մէջ, յափրանակողն՝ իւր զօրաց գլխին կանգնած ժամանակն, իշխանն՝ իւր աթոռի վերան, որպէս և հզօրն ու տկարը։

Ի՛նչքան ուզես, ծաղր արա, ծածուկ չարագործ, մտածիր քո մէջը թէ՝ իմ անարգ գործերիս հոտն անգամ ոչ ոք առած չէ։—Մի՛թէ յիրաւի գիտես դու և անկասկած ես, որ այս իսկ րոպէի մէջ քո անպիտան գործերդ յայտնուած չե՞ն ու դու խայտառակուած չե՞ս՝ մի պատահական առիթով, որոյ մասին բոլորովին անհոգ էիր դու՝ քո խորամանկութիւնովդ։ Գիտե՞ս, որ արդէն այժըմ իսկ մէկի աչքերը քո վերայ չեն մտիկ տալի, քեզ չեն դիտում ու քեզ բռնած չեն քո յանցանքներիդ մէջը։

Ծաղր արա, ինչքան կուզես, դու թեթևամիտ մարդ, ու քո սրտիդ նեղութիւն պատճառող հոգսերը քեզանից դէն. քցիր, հեռացուր այն մխիթարական խօսքովդ թէ՝ անբաղդութիւնն այնպէս հեշտ կերպով իմ՝ վերայ չի գալ։ Աստուծոյ ամենագիտութիւնը մի առակ՝ մի առասպել է, որով երեխերքին ու դիւրահաւատ՝ պարզամիտ մարդոց կարելի է վախեցնել, բայց ինձ՝ չէ։—Համբերիր, քո ժամդ կխփի, ու դու, նոյնպէս թուլասրտութեամբ կը յուսահատուես, ինչպէս որ թուլասրտութեամբ առաքինութիւնը դէն քցեցիր, ու նորանից հեռացար։

Երկնքի հաստատութեան նման՝ որ իւր հաստատիմն ու անսա-

սան սիւներէն վերայ յաւիտեան հաստատուն կերպով կանգնած կայ, այնպէս հաստատ է այն խօսքը թէ՝ Ընկեր ոչ ի ձաձուէ բան, ոչ ընդդէմ ընդ է, ոչ ի նախոյն բան, ոչ մարդ ընկնաչ։

Հազիւ թէ կասկածելի է, թէ երկուսէն մին է աւելի գարշելին, անարգն ու անպիտանը, արդեօք յայտնի մեղաւորը՝ թէ ծածուկ չարագործը։

Այն մարդն, որոյ մեղքերը յայտնի են, իւր ամօթն ու նախատինքն աշխարհի առաջն է հանում։ Իբրև յանցաւոր քաղաքական կարգադրութիւնների ու օրէնքների դէմ՝ կրում է այդ մեղքերի համար սահմանուած պատիժներն. իբրև յանցաւոր բարի բարքի ու վարքի դէմ՝ կրում է նա անպատուութիւնն ու անարգանք, որ հասարակաց կարծիքը նորան աչքից քցում է։ Նա զրկվում է շատ բանից. նա զրկվում է կեանքի բաղդաւորութիւնից. նա գիտէ որ, լաւ մարդիկն իրան արհամարհում են. նա գիտէ որ, մարդ չկայ, որ իրան պատուի, ոչ ոք սրտանց իրան չէ սիրում. ոչ ոք սիրտ չէ անում, որ յայտնի կերպով իրան հաւատայ. Նատեքն, որոնց շրջանի մէջ կարող էր նա բաղդաւոր լինել, հեռու են պահում իրանց նորանից. վախենում են որ, նորա հետ մօտ յարաբերութիւն ունենալով, իրանք էլ չարաւաւորուեն իրան պէս և անունից ու պատուից զրկուեն։

Այն խղճալի ու ողորմելի մարդն, որ այդպիսի խայտառակութիւն տանում՝ կամայ ակամայ ու համբերութեամբ՝ արդէն իւր տեսակի մարդոց ամենաանարգների ու անպիտանների կարգումն է։ Կարծես՝ ինքն իւր անարգութիւնով՝ ամօթ ու նախատինք է մարդկային ազգի լաւ մասի համար։ Կարելի է, որ դեռ և այս չընկճուած քաջ սրտովն ընդդիմանում է իւր մեղքերին։ Բայց նա չէ իւր չար գործերի վերայ իշխանութիւն ունեցողն ու իւր ձեռքը չէ իւր զղուելի գործն անելը, կամ չանելը. ոչ՝ այլ իւր անարգ վանցանքն է, որ իրան իւր իշխանութեան տակն է քցել ու իրան բուռի մէջ հաւաքել. այդ իւր մեղքը քաշաքաշ տանում է իրան, հակառակ իւր ցանկութեանցը, հակառակ իւր ամենալաւ հասկացողութեանը, մինչև անգամ հակառակ իւր ղղջմանը՝ կորցրած մէկ ապտիճանից դէպ ի միւսը իջեցնելով, մինչև որ ուժից ընկնում է ու յաղթվում։ Սարսափելի դրութիւն, Արդեօք այն յայտնի չարագործն, որ անպատկառութիւնովն ամենևին չէ ծածկում թէ՝ մարդկային ու աստուածային կարգի ու կանոնները

րի հակառակ կեանք է վարում, աւելի՛ ստելի է քան թէ ծածուկ մեղաւորն՝—իբրև այնպիսի մի մարդ՝ որ իւր ամօթալի ու անարգ գործի հետ խաբէութիւն էլ է բանեցնում ամեն պատուաւոր ու բարի մարդոց առաջն, որ իւր ամեն մի յանցանքը նորանով է երկար ծածկում, պարակում, որ իրան աւելի լաւ մարդ է ցոյց տալի՝ քան թէ է իսկապէս։

Ցայտնի յանցաւորից կարող է մարդ զգուշանալ, որ իւր համար վտանգաւոր չլինի։ Կան մէջոցներ՝ կամ հեռու կենալու նորանից կամ վախացնելու նորա աչքը։ Բայց ծածուկ մեղաւորն առաքինութեան դիմակ է իւր երեսին դնում. ձեռք է բերում պարզ սիրտ ու հոգի ունեցող մարդոց հաւատարմութիւնն, ու նոցա թուլնաւորումէ իւր ժպիտովը, դեռ իրանից խաբուածներից պատուոյ հարկ ու մատո էլ է առանում, մինչդեռ նոցա անարգանացն ու նզովքին արժանի է։

Մտիկ տուէ՛ք այն կողմն. այնտեղ կանգնած է հասարակաց ինչքը վատնողն, այրիներին ու որբերին խաբողն՝ ու իւր արդարութեանը համար պատիւ ու մեծարանք է առանում, մինչդեռ իւր խաբեբայութիւններովն արժանի էր հրապարակական պատժի։ Մտիկ տուէ՛ք այս կողմ վաշխառուին, որ ծածուկ աղքատ մարդոց կեղեքում է, նոցա արիւնը ծծում, բայց իրան իբրև բարեպաշտ քրիստոնեայ՝ պատուել է տալիս։ Մտիկ տուէ՛ք այն տեղ շնացողին, որ իրաւանց, արդարութեան ու բարոյականութեան համար կեղծաւորաբար նախանձախնդիր է իրան ցոյց տալիս՝ ու ընտանեաց սուրբ խաղաղութիւնն իւր շնական մարմնասիրութեամբը խանգարում։ Ա՛յն տեղ նայեցէ՛ք. որոգայթներ լարող նենգաւորն, որ այս տեղ շողոքորթումէ, այնտեղ մուր է քսում. որ իւր ատելութեան, նախանձի խեղճ և ստոր պատուասիրութեան նպատակներին հասնի. որ երկպառակութիւն է քցում ազգականների, հարևանների ու քաղաքացիների մէջ ու իրարից բաժան բաժան անում. ու էլի իբրև մի շատ բարեսէր, ամենին լաւութիւն կամեցող ու երախտաւոր մարդ՝ իւր ցանկութեանը համեմատ՝ պատիւ վայելում ուրիշներից, այնպէս ցոյց տալով որ, ամենի լաւ դրութիւնն ու վիճակը իւր սրտին շատ մօտիկ է ու ցանկալի։ Նայեցէ՛ք այնտեղ. երիտասարդն, որի մասին միամիտ ծնողքը վատ բան մտքներիցն անգամ չէին անց կացնում ու այսօր դեռ և՛ս առաքինի էին համարում, բայց նա իւր ան-

ժեղութիւնն արդէն վաղուց ծածուկ մոլութիւնների մէջ կորցրել է։

Ի՞նչ են ասում. իւր յանցանքներով յայտնի ու ճակատին խարանի դրոշմ ունեցող չարագործն աւելի գարշելի է՝ քան թէ այս ծածուկ մեղաւորները, ուզումեմ ասել, քան թէ նոքա, որոնցից ոչ ոքչի կարող զգուշանալ, որովհետև իրանց արատաւորուած սիրտը պատուաւոր մարդու երևոյթքով կարողանում են ծածկել ու ամեն մարդոյ դրանով գարշելի կերպով խաբել։

Նոքա դեռ և էս իրանց վերայ իշխել ու իրանց մեղքերը գոնէ այնքան զսպել գիտեն, որ դեռ և էս կարող են իրանց սանձել, որ իրենց սրտինը՝ դժգոհութեամբ, տհաճութեամբ, կամ մի ուրիշ կերպով դուրս չգայ ու չյայտնուի։ Նոքա յանցանքներ են գործում ոչ թէ անգիտութեամբ, այլ շատ լաւ իմանալով՝ թէ ինչ գարշելի բաներ են անում։ Նոքա իրանց խաւարի գործերը միշտ առաջ են տանում ու կատարում՝ իրանց մտքումն արդէն որոշած ու վճռած ճանապարհով ու ծրագրով։ Ցիրաւի, այսպիսի գարշելի մարդիկն արդարութեան և իրաւանց վերայ դատաստան անողների առաջը շատ աւելի պատժի արժանի են, քան թէ այն թշուառներն, որ իրանց բուռն կրքերի յուզմունքից տարուելով, հազիւ թէ այնուհետև գիտեն ու հասնում են իրանց գարշելի գործի այն ամենաստոր աստիճանին, որոյ մէջ իրանք իրանց քըցում են։

Այս պատկերի մէջ քեզ ճանաչիր, գլխիդ մինչև ոտքդ դողալով՝ դու՝ ինքդ քեզ կորցրած ու փչացրած մարդ, որուն իւր խըղճմտանքն ասում է թէ՝ այդ՝ դու ես այն կորած մարդը և որն որ դեռ և էս ունի այնչափ զգացմունք՝ ուղիղ ու ծուռ գործի մասին, որ կարող է հասկանալ թէ՝ ինչ բանն է ազնիւ՝ կամ ինչն՝ անազնիւ։ Ճանաչիր քեզ այս պատկերի մէջ, ուրիշների պատիւն ոտքի տակ առնող, չարահոգի մարդ. այս պատկերի մէջ ճանաչիր քեզ, ուրիշների սեփականութիւնն անպիտան ճանապարհներով քու ձեռքդ քցող չար ու յափշտակող գաղան. ճանաչիր քեզ, այս պատկերիս մէջ, խորամանկ ու նենգամիտ ինքնասէր, որ ուրիշների համար ուրախութեամբ ու սիրով փոս ես փորում. ու դու թունաւոր պղպտրիչ, որ մեղմոյն շրթունքներովդ զրպարտութեան շողոքորթութեամբ ինչ շրթունքներովդ որ մի քիչ առաջ նորան պղպտրել ես։

Դու շատ ու շատ աւելի վտանգաւոր ես ամեն մարդոյ համար, քան թէ յայտնի չարագործը. բայց այսպէս է բերում բանը քո մոլութիւնիդ տեսակն, որ քեզ իսկ համար էլ աւելի վտանգաւոր է. պատճառն որ քեզ ոչ ոք չէ կարող խորհուրդ տալ քո բռնած ճանապարհդ փոխելու, քանի որ քեզ յաջողում է քո նեխած ու ապականած սրտիդ թունաւոր խոցն աշխարհի աչքիցը ծածկել. ջո՛ ամեն վատ ու գարշելի բան՝ ծածուկ տեսնելդ ու ծածուկ պահել կարողանալդ՝ քեզ աւելի միամտայնումէ, որ աւելի ապահով ու անկասկած մնաս ու մնաս քո մեղքերիդ մէջը. քո շարունակել կարողանալդ քո վատ գործերդ ու ամենևին յետ չկենալդ նորանցից՝ աւելի ոյժ է տալի քեզ ու զօրացնում քեզ՝ քո բռնած այն ճանապարհի մէջ, որով քո սիրտդ ու հոգիդ պէտք է ապահովես ու փրկացնես. որչափ որ երկար ժամանակ կարող ես դու քո ծածուկ անպիտան գործերն՝ առանց լսնացուելու՝ շարունակել, այնքան աւելի զարհուրելի կերպով չարի հոսանքը ուռչում, բարձրանում է, ու աւելի կատաղաբար քո վերայ պէտք է յարձակուի.

Թէև դու արդէն պատժուած ես, որովհետև արդէն զգում ես՝ որ քո սիրտդ, քանի դնում է, դժոխք է սկսում դառնալ այո՛ քո վատ գործերիդ մեծութեանը համեմատ՝ արդէն դու բաւական թշուառ ես. բայց աւելի մեծ թշուառութիւնը յետոյ պիտի գայ քո գլխիդ. Կարելի է, դու ասում ես քո մէջդ թէ՝ դեռ ևս թշուառութիւն չեմ զգում ու չեմ հասկանում, որ իմ սրտիս մէջը գժոխք է. Ի՞նչպէս կարող ես այդ ասել. ապա ինչո՞ւ ես վախենալով՝ ծածկում քո մեղքերդ. Ուրեմն զգում ես, որ քո գործերդ գարշելի են. Եթէ որ քո գործերդ ուղիղ և մաքուր լինէին, խաւարի մէջ կծածկէիր, կթագցնէիր. և արդեօք մարդուս իւր անարժանութեան զգացմունքն արդէն մի սարսափելի պատիժ քաշելու սկիզբը չէ՞. Չես դողում հէնց այժմ էլ արդէն ու քո մէկ ծառի տերևների խշխշալով շարժուելովցը. Արդեօք չես սպրանում քաթանի նման, երբոր մտածում ես թէ՝ մի օր ամենայն բան կարող է բացուիլ, յայտնուիլ. Եւ ճշմարիտ, կ՚յայտնուին քո գործքերդ, քանի որ երկնքումն արդարադատ Աստուած կայ.

Ինչ որ դու մեղանչումես քեզ նման մարդոց դէմը,—ով ուզում են լինին նոքա,—շուտ՝ թէ ուշ՝ ծանր կերպով փոխարէնը կստանաս իրեն քո Հատուցումնդ ու քո վերայ յետ կդառնան քո արածներդ. Ամեն մի ոտնակոխ արած պատիւ, ամեն մի չյար-

գուած, կամ՝ անտես արած արդարութիւն և իրաւունք, ամեն մի արդար ճանապարհով ձեռք բերած ինչք՝ շուտ՝ թէ ուշ իրանց գանգատաւորները կունենան ու կգտնեն։ Մի կարծիր, որ քո խորամանկութիւնդ քո գլխից կհեռացնի՝ քեզ համար անվնաս կերպով՝ ամեն մի շատ անախորժ բան, որ դուրս կգայ ապագայում. քեզանից մի աւելի խելօքը քեզ կյաղթի ու դու կյաղթուես. որովհետև, եթէ ոչ քո խղճմտանքդ, գոնէ ինքդ քեզ լաւ ճանաչելդ թէ՝ ինչ գործերի տէր մարդ ես, քեզ կտկարացնի։ Մի յուսար, որ քո ունեցած անունդ ու ազդեցութիւնդ քեզ կփրկի. քեզանից աւելի զօրաւորն՝ իւր ունեցած անունովն ու ազդեցութեամբ քո վերայ կգայ, և աշխարհիս վերայ ամենից աւելի զօրաւորը՝ հասարակաց կարծիքն է։ Նա չլատումէ զօրաց զօրութիւնը, նա իշխաններին ցած է գլորում արիւնով արատաւորուած իրանց աթոռից։ Մարդոց քեզ ներելուն վերայ յոյս չունենաս. չարագործի երեսի դիմակը հանել, նորան ցոյց տալն աշխարհին իւր իսկական կերպարանքովն ու մորակելով խրատելն իւր ամբարշտի ու չար գործերին համար՝ ամեն մի մարդու պարտականութիւնն է։ Ինքդ քեզ մխիթարեցնել մի, որ դու քո գործերովդ ծածկուած կըմնաս, ոչ ոք քո ինչ եղածդ երբէք չի ճանաչիլ ու քեզ արժանի եղած բաժինդ, լաւն ասեմ, պատիժդ չես ստանալ։ Վիրաւորուած մարդիկ սուր յիշողութիւն ունին և երկար ժամանակ քան չեն մոռանում. տարիներով պտռտումեն հետքն այն մարդոց, որ իրանց քաշած զրկանքութիւնների պատճառներն եղան։

Ինչ որ դու քո դէմ, քո անձիդ դէմ մեղանչումես, թէ ինքդ, և թէ քո մերմինդ բոլոր աշխարհին կըմատնեն՝ յայտնելով արածներդ։ Ծածուկ պահած մեղութիւնդ՝ քո խոր ընկած աչքերիդ կըքարոզուի, ու քո քայքայուած առողջութիւնդ ամենուն կիմացնեն քո խորշոմներդ։ Մի վատառողջ, շուտ թառամող նոր սերունդ քո սրտիդ համար տանջանք կըլինի, երբ որ նոցա վերայ կընայես, և քո կենաց ճանապարհի վերայ ու քո գերեզմանիդ շուրջը փուշեր կըցանի։ Մրմէք կարծումես, որ դու միայն կարող ես մահկացուների մէջ այն անհատը լինել՝ իբրև բացառութիւն՝ որ ծածուկ մեղքերի վատ հետևանքից անվնաս մնաս։ Ուզումես դու մենակ այն մարդը լինել, որ բնութեան յաւիտենական օրէնքներից մի բացառութիւն լինի, այսինքն է, տիեզերաց մէջ դրած

աստուածային կարգիդը դուրս մի մարդ մնաս։ Չէ, չէ, մի սըխալուիր, ու այդպիսի բան մտքիդդ ամենևին մի անցկացնիլ. լաւ իմացիր, որ աշխարհիս օրէնքն այն է՝ որ ի մարդ այն պիտի հնչէ՝ ինչ որ յաւել է։

Չէ, ինչ է. սարսափ է գալի վերադ. իրաւունք ունիս, պէտք է գոյ վրադ այդ ահ ու դողն. որովհետև այդ սարսափն, այս տեղ մի բարոյականութեան քարոզչի լեզու չէ, որ իւօսում է. այլ աշխարհի ամեն փորձառութիւններն են քեզ բարձր ձայնով այդ ասում։ Կան մի մի սարսափելի ճշմարտութիւններ, որ ոչ գինու գոլորշիով կարելի է թմրացնել, ոչ կակուղ բարձի վերայ քնով անցկացնել. ոչ ուրախ ուրախ կատակներով իբրև մի ծիծաղելու բան՝ գլխից դէն քցել։ Այդ ճշմարտութիւնները միշտ կան, չեն անհետանում, միշտ և անդադար վերադառնում են մեր միտքն ու սիրտը մտնում ու մեզ չարչարում, այս՝ յաւիտենական դատաստանի ճիւաղները։

Եւ դու, որ այս տողերը կարդում ես, լաւ իմանալով քո ծածուկ յանցանքներդ, որ քո սրտիդ վերայ ծանրանում են՝ — ազատիր քեզ. կարելի է, որ դեռ և այս բոլորովին ուշ չէ այն ուղղելու՝ ինչ որ դու ծածուկ արել ես իբրև վատ գործ. կարելի է, որ դեռ և այս շատ ուշ չէ դարձեալ մի հանգիստ՝ ուրախ՝ անբասիր խղճմտանքի տէր լինելու. դարձեալ ուրախութիւն վայելելու և մաքուր սըրտով լաւ մարդոյ մտօք կանգնելու, դարձեալ առանց լքման կարողանալու դէպ ի վեր նայել ամենագէտ Աստուծուն։

Թո՛ղ պատ ից մարմնական անվայել զատարնանեղը, պրոնցէց հրապարակաս ամալամբ. բայց թող քո անմաքուր դիտաւորութիւններդ, որ դու իրաւացի երկիւղով ծածկում ես մարդկանցից. հեռու կաց քո վատ ընկերներիցդ, որ քեզ վերջացրէս կատարեալ չարագործ պէտք է անեն։ Թէ դու սխալուել կարող ես, կամ երկար ժամանակ տարուբերուել անելու այն բանն, ինչ որ ուղիղն է և ընդունելին՝ այդ բանից մի ամաչիլ։ Դու մարդ ես, դու մահ ես գալի հողի և յաւիտենականութեան մէջ, ուզում եմ ասել, որ դու՝ հողեղէն ես ու մահկանացու՝ հողի բաժին մարմնով, և միանգամայն յաւիտենականութեան պատկանող՝ անմահ հոգւով. յաւիտենական կենաց մէջ մտնելու և բաժին ունեցող մի բանաւոր ու կատարելութիւն ունեցող էակ ես, թէև քո մէջ խօսում են թէ զգայականութիւնն և թէ բանականութիւնը։ Բայց

քո յուլուԹիւնիցդ ու ԹուլուԹիւնիցդ ամաչիր, ու մի կարծիլ՝ ԹԷ չես կարող փոխուել, լաւանալ, ուստ հրապոյրներից քեզ կորելով, ազատուելով։ Մի փորձիր, կարելի է դեռ ևս բաւական այժ ու կարողուԹիւն ունիս ինքդ քո գլխիդ տէրը լինելու ու քեզ վերայ իշխելու։

ՍէՀ ծածուկ կերպով վնաս ես տուել, վազիր՝ փոխարինիր, ինչպէս որ կարող ես, այդ գործդ երկար տարիներ քո սրտիդ վերայ լաւ ներգործուԹիւն կունենայ ու մի ախորժ զգացմունք քո մէջդ կԹողնի։ ԵԹԷ խաբել ես, վազիր, գնա՛, արած վատ գործիդ հետևանքներն ուղղելու, ջնջելու, անհետացնելու, անարդարուԹեամբ ձեռք բերած գումարը փոխարինիր եռապատիկ ու չորեքպատիկ։ ԵԹԷ դու վիրաւորել ես, ցաւացրել, վազիր՝ գնա՛՝ հաշտուԹիան ճանապարհը բռնիր՝ ոչ խօսքերով, այլ գործերով։ Ոչ մի տեղ և ոչ երբէք ԹոյլՄի տալ, որ անձնական պատուոյդ մասին ունեցած զգացմունքդ քեզ ճանապարհիցդ հանի ու քեզ ԹուլացրիլԱրած վատ գործդ միայն վարագուրելու, փոխանակ ուղղելու և բժշկելու։ Բժշկիր արած գործդ։ Ամեն մի ծածուկ մեղք, սրտի համար քաղցկեղ է, որ ամեն օր՝ քանի գնումէ՝ տարածվումէ։ Պատուոյդ մասին ունեցած սխալ զգացումովդ մի Թողուր քեզ յետ կենալ քո լաւ դիտաւորուԹիւնիցդ, Թէև ուրիշները պարծենան էլ՝ ԹԷ խեղճացար իրանց առաջին, քո մեղքդ ճանաչելով։ ԵԹԷ որ պատահի և ես, որ քեզ լաւ մարդու տեղ էլ չդնեն, այդ և ես պէտք է ընդունես իբրև քո յանցանաց արդար պատիժն ու ասես, արժանի եմ։

Երանի անմեղին ու արդարին՝ որ Քո առաջդ, ով Աստուած և Տէր, գաղտնի մեղքիցն ազատ է ճանաչում իրան, որ առանց խղճի խայԹոցի կարող է իւր աղօԹքը դէպ ի Քեզ ուղղել և առանց երկիւղի ու քաշուելու, իւր նման մարդոց առաջը դուրս գալ։ Քո առաջդ ոչ ոք չի արդարանալ, ոչ ոք սուրբ չէ։ Ո՞վ կարող էր Քո առաջդ կանգնել, եԹԷ որ դու մեզ հետ անաչառուԹեամբ դատաստանի մտնել կամենայիր։ Բայց Դու, ողորմումես մեզ, ամենողորմ Տէր, որովհետև դու ճանաչումես մեր տկարուԹիւնն ու ԹուլուԹիւնը։

Ո՛վ Աստուած, սուրբ պէրպ հաստատիչ իմ մէջս, սո՛ւրբ ինչ նոր՝ սէղծ հոգի։

Քո երեսիցդ ինձ մի քշիր, և Քո Սուրբ Հոգիդ ինձնիցմի՛ Հանիլ։

(Թարգմ.) Գ. Ե. Ա.

ՀԱՑԱՍՏԱՆՆԱՑՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

(Շարունակ. Ա[illegible]տ. 1885 թ. ե.)

Գ.Լ. Թ.

Պետրոս Ա. կաթուղիկոս շատ դժբաղդ ժամանակի մէջ սկսեց վարել հայրապետական իշխանութիւն, որովհետև ներքին և արտաքին խռովութիւնները անպակաս էին։ Գագիկ շահնշահի վախճանմամբ՝ նորա Յովհաննէս—Սմբատ և Աշոտ որդիքը սկսեցին միմեանց դէմ պատերազմել՝ հակառակ միմեանց թագաւորելու համար։ Պետրոս ձեռնտուութեամբ հայ նախարարների թէև հաշտեցրեց այս երկու եղբայրներին, բայց հաշտութիւնը երկար չտևեց, որովհետև Աշոտ թագաւորելու բուռն տենչանք ունենալով՝ հիւանդ ձևացաւ, և տես հրաւիրեց իւր թագաւորացեալ Յովհաննէս—Սմբատ եղբօրը, և թախտի մէջ կալանաւորելով՝ յանձնեց իւր սիրելի Ապիրատ իշխանին՝ սպանելու համար. բայց Ապիրատ ազատեց Յովհաննէս—Սմբատ թագաւորին՝ ասելով. «Անողորմ բռնաւորից աւելի լաւ է Հայոցս թագաւոր ունենալ խմաստուն մարդուն»։ Աշոտ չըհանդուրժելով իւր այս խորդաւանքի անյաջող ելքին և նորա հետևանք անարգանացը, դիմեց կայսեր և նորանից զօրք ստանալով նուաճեց իւր այն նախարարներին՝ որոնք իւր ապիրատութիւնները տեսնելով՝ հեռացել էին։

Այս իսկ ժամանակները (1021 թ.) Սկիւթացիք յարձակուեցին Հայաստանի վերայ և հասան մինչև Վասպուրական աշխարհը. Սենեքերիմ արծրունի թագաւորը իւր իշխանութեան քայքայեալ դրութիւնը աչքի առաջ ունենալով, և նկատելով որ չի կարող դիմադրել ներքին և արտաքին պատերազմներին, թըղթով խոստացաւ Յունաց կայսեր, Վասպուրական աշխարհը նորան յանձնել՝ եթէ տրուի նրան Սեբաստիա քաղաքը իւր շրջակայքով։ Այս թուղթը Սենեքերիմ մեծամեծ ընծաների հետ ուղարկեց Կոստանդնուպոլիս իւր Դաւիթ որդու և Ռշտունեաց Եղիշէ եպիսկոպոսի ձեռքով։ Կայսրը ընդունեց Սենեքերիմի առաջարկութիւնը. և Սենեքերիմ իւր աւագանիով հանդերձ փոխա-

դրուեց Սեբաստիա։ Նորան հետևեց բազմաթիւ ժողովուրդ, որոնք Եփրատի ափերին Ակն և Արաբկիր քաղաքները շինեցին։ Հետևեցին և շատ վանականներ և յատկապէս Նարեկայ վանքի վանականները, որոնք իրանց հետ վերցրած Ս. Գրիգոր Նարեկացու մարմինը պետեղեցին Սեբաստիայում՝ Նորա անուամբ շինած Նարեկայ վանքի մէջ։ Սենեքերիմ՝ որ հետը տարել է Վարագայ Սուրբ Խաչը, այնտեղ մի վանք շինեց պետեղելու համար։ Պետրոս կաթուղիկոս և նա գնաց Սեբաստիա և մի քանի տարի այնտեղ մնաց։ Իսկ Սկիւթացիք, որ ասպատակում էին Վասպուրականում իրանց արշաւանքը զանազան կողմեր ուղղեցին, և իրանց գլխաւոր Տուղրիլ բէկի առաջնորդութեամբ հասան Նախիջևան։ Այն տեղից ասպատակ սփռելով մինչև Նիգ գաւառը, գերեցին բնակիչներին, աւերեցին եկեղեցիքն ու վանորայքը և ստիպեցին գերեալներին ուրանալ քրիստոնէական հաւատը։ Այս որ լսեց Վասակ Պահլաւունի սպարապետը՝ որ այդ ժամանակ Բջնիում էր, հրաւէր կարդաց իր իշխանութեան տակ եղած իշխաններին և զօրականներին։ Նոցա հետ համախոհութեամբ խոստովանելուց ու հաղորդուելուց յետոյ նախ քան յարձակուելը թշնամեաց վերայ իր զօրքերին խրախուսելու համար ասաց։ «Աստուծոյ վերայ դնենք մեր յոյսը և նորանով առաքինանանք պատերազմի մէջ։ որովհետև Նորա անուամբն է առաջիկայ պատերազմը Քրիստոսի եկեղեցու պայծառութեան համար։ և եթէ Ցիսուս Քրիստոս կամենում է որ այս սուրբ խոստովանութեան համար մեր անձը դնենք, չըվախենանք ուրեմն մեր հաւատոյ թշնամիների հետ պատերազմելուց»։

Այս պատերազմի մէջ երբ յաղթութիւնն ի գլուխ հանած Վասակ Պահլաւունի յանհոգս փառաբանում էր Աստուծոյ, թշնամիներից մինը գաղտ մտած՝ քարով խփեց Նորա գլխին, որով և վախճանուեց հաւատոյ նահատակ Վասակ։ Իսկ Տուղրիլ Հայաստանից անցնելով Պարսկաստան՝ տիրեց ամբողջ երկրին և ամիրապետի հաճութեամբ վերականգնեց 400 տարուց հետէ ընդհատեալ Պարսից թագաւորութիւնը։

Պետրոս կաթուղիկոս որ Սեբաստիայում էր՝ երբ Ցունաց Վասիլ կայսրը հասաւ Խոզտեայ աշխարհը՝ գնաց Նորա մօտ ըստ խնդրոյ Ցովհաննէս — Սմբատ թագաւորի և ներկայացնելով Ցովհաննէս Սմբատի թուղթը, որով խոստանում էր նա իւր մահից յետոյ Անին

Յունաց Թոդոսիոս, խնդրեց որ կայսրը Հովհաննուորէ Բագրատունեաց Թագաւորութիւնը։ Կայսրը սիրով ընդունեց կաթուղիկոսի պատգամաւորութիւնը և ուրախութեամբ խոստացաւ կատարել ինչ որ խնդրուէր։ մեծամեծ պատիւներ տուեց և առաջարկեց Զրօրհնեաց ոսնին գետի վերայ Ջրօրհնեաց հանդէսը կատարել՝ որ այս հանդէսը կատարելիս ըստ պատմելոյ ժամանակակից պատմչաց՝ գետի ջուրը կանգ առնելուն համար գետադարձ կոչուեց։ Պետրոս կաթուղիկոս այս պատգամաւորութիւնից յետոյ վերադարձաւ Սեբաստիա և այնտեղ Սենեքերիմ Թագաւորի մօտ բնակութիւն հաստատեց մինչև նորա մահը։ Սենեքերիմի կտակին համեմատ նորա մահից յետոյ նորա մարմինը վապուրական և վարագայ սուրբ խաչը 1027 թ. փոխադրուեց Վարագ։

Պետրոս կաթուղիկոս Սենեքերիմի մահից յետոյ եկաւ Անի, բայց թէ Թագաւորը և թէ իշխանք կասկածուէին նորանից և ժժգոհ էին նորա երկար ժամանակ Սեբաստիայում կենալուից։ Պետրոս Ա. իմանալով այս՝ լռելեայն հեռացաւ և գնաց Վասպուրական՝ որ Յունաց ձեռքն էր և բնակուեց Զորոյ վանքում։

Թագաւորը և իշխանները կասկածելով որ եթէ նոր կաթուղիկոս ընտրեն գուցէ Պետրոս չըհրաժարուի և հայրապետութիւնը բաժանուի, ուստի նորան հրաւիրեցին գալ և վարել իւր իշխանութիւնը, և երբ նա Անի հասաւ, 1034 թ. կալանաւորեալ ուղարկուեց Բջնոյ ատանը՝ Գրիգոր Մագիստրոսի Վահրամ հօրեղբօր մօտ, և հետևեալ տարին Սանահնայ վանահայր Դիոսկորոս կաթուղիկոս նշանակուեց. բայց Դիոսկորոս անպիտան և վատթար մարդկանց եպիսկոպոս ձեռնադրելով, յայտնի յանցանքի պատճառով պատժուած եպիսկոպոսներին նորից պաշտօն տալով, արժանաւորներին իշխանութիւնից ձգելով և նոցա ինչքը յափշտակելով՝ բոլորին էլ առելի դարձաւ. իսկ հայ հոգևորականութիւնը այս անարժան գործերը տեսնելով բանադրեց նորան և նորա պաշտպաններին. Թագաւորը և ուագանին կասկածելով թէ մի գուցէ այս բանը վատ հետևանք ունենայ, նորից խնդրեցին Պետրոսին գալ և իւր իշխանութիւնը վարել և երբ նա հրաժարուեց՝ նոցա հրաւիրմամբ և խնդրանօք Աղուանից Յովսէփ կաթուղիկոս եկաւ Անի և իւր գահերեցութեամբ Անուոյ Դ. ժողով գումարեց 1036 թ. 4000 ի մօտ մարդկանց ներկայութեամբ. Դիոսկորոսին գահընկէց արեց ու ուղարկեց Սանահին ապստր, նորա

ձեռնադրածներին ապաշխարանքի ենթարկեց, և Պետրոսին նորից կաթուղիկոս հրատարակեց։

Նոյն 1036 թուին Դվնայ Ատուսվար Պարսից ոստիկանը օգնութեամբ Պարսից Տուղրիլ թագաւորի սկսեց տոպատակել. այրումէր եկեղեցիքը, ջարդումէր խաչերը, տիպումէր ուրանալ քրիստոնէութիւնը և ամենց բռնի թլփատումէր։ Գաւգարաց Դաւիթ Անհողին կոչեցեալ թագաւորը տեսնելով որ Ատուսվար իւր երկրումն և պատրաստվումէ նոյն չարիքը գործել, Աղուանից Յովսէփ կաթուղիկոսին հրաւէր ուղարկեց որ եպիսկոպոսներով իւր բանակը հասնի Քրիստոսի եկեղեցու պաշտպանութեան համար դիմագրաւելու. նոյնպիսի հրաւէրներ ուղարկեց նաև Հայոց եպիսկոպոսներին ու վանորայքը. հրաւէր կարդաց բոլոր աշխարհին՝ ասելով. «Կամ բոլորս միասին Քրիստոսի համար մեռնենք, կամ յաղթելով և դուրս քշելով թշնամուն՝ ազատենք եկեղեցին. ուրեմն, ով որ մարտիրոսական մահուան է ցանկանում՝ թող մեզ մօտ գայ»։

Շուտով խմբուեցին Դաւթի մօտ եպիսկոպոսներ, քահանաներ, կրօնաւորներ խաչ ու ետեւտարանով և աշխարհական մարդիկ ամենք պինաւորեալ՝ և ամենք անզէն. երբոր սկսեց պատերազմը, հոգևորական դասը միաբերան գոչեց. «Արի Տէր, օգնեա մեզ և փրկեա գմեզ վասն անուանդ քումմ սրբոյ»։

Քրիստոնեայք քաջալերուած և սպառազինուած սուրբ հատատոյ պաշտպանութեան սիրով աներկիւղ յուսով յարձակուեցին Ատուսվարի վերայ, ահագին կոտորածներ արին, յաղթեցին և բազմաթիւ աւարներով վերադարձան ու փառաւորեցին Աստուծոյ անունը։

Այս խռովութիւնները նոր դադարած էին Յոյնք Յովհաննէս Սմբատի մահից յետոյ նորա ձեռագրին համեմատ պահանջեցին Անի քաղաքը. իսկ Յովհաննէս Սմբատի եղբօր որդին Գագիկ թագաւորելով, ընդդիմանալումէր և ասում՝ որ Անի Բագրատունեաց Հայրենի ժառանգութիւնը լինելով Յովհաննէս Սմբատ ինքն մինակ իրաւունք չունէր ձեռագրով Յունաց տալու։ Սագին Վիստ Սիւնեաց իշխանը, որ կամենումէր թագաւորել, գրգռումէր Յոյներին պահանջել անպատճառ Անին. և յաջողելով այս կտակը իրանից հեռացնել՝ միևնոյն ժամանակ Յունաց կամակատար ներկայացրեց Գրիգոր Մագիստրոսին, որին Գագիկ սկսեց հալա-

ծել. Գրիգոր մագիստրոս իմացել Արարատեան աշխարհը և գնալ Տարօն, բայց այնտեղ ևս չը կարողանալով ապատուել Գագկի հալածանքից՝ հեռացաւ Կոստանդնուպոլիս՝ ուր մանկութիւնից դաստիարակուել էր և այն տեղ հանդիպելով Մանուէլ անունով մի մահմեդական հմուտ գիտնականի, կրօնական վէճի մէջ, երբ իր հակառակորդը Սուրբ Գրոց ոտանաւոր գրուածքը լինելը մի խոշոր պակասութիւն էր համարում, Գրիգոր մագիստրոս սրպէս զի ցոյց տայ թէ ոտանաւորը իբրև մարդկային արուեստ, մի առանձին արժանիք չէ կարող տալ Աւետարանին, երեք օրուայ մէջ Սուրբ Գրոց պատմութիւնները ոտանաւորի դարձրեց, որով պարզացած Մանուէլ՝ քրիստոնեայ դարձաւ։

Վեստ Սարգիս Պետրոս կաթուղիկոսին Գագկի հետ քաղաքեամբ իշխանացնելուց յետոյ՝ խորհուրդ տուեց Յունաց Մանոմախոս կայսեր Անին գրաւելու համար սիրոյ պատրուակով Գագկին իր մօտ հրաւիրել և յարգելանս պահելով տիրել ոչ միայն Անիին, այլև վերջացնելով Բագրատունեաց թագաւորութիւնը՝ տիրել ամբողջ Հայաստանին։ Կայսրը այսպէս էլ արեց. Գագկին սիրոյ նամակ գրեց իր մօտ հրաւիրելով Անւոյ գրաւման մասին թուղթը յետ տալու և բարեկամութեան գաշն կապելու պատրուակով, բայց Վահրամ Պահլաւունի զօրավարը իմանալով Յունաց նենգութիւնը, խորհուրդ չըտուեց Գագկին գնալ. կայսրը երկրորդեց բայց երբ իր հրաւէրը այս անգամ էլ չընդունուեց այն ժամանակ Վեստ Սարգիսի դրդմամբ նախարարները առարկելով թէ կրկնակի հրաւէր մերժելը գուցէ առիթ տայ կայսեր զայրոյթին և պատերազմական յարձակմանց՝ խորհուրդ տուին Գագկին գնալ, խոստանալով և Պետրոս կաթուղիկոսի ներկայութեամբ երդուելով ցյետին շունչ պաշտպանել Անին. Գագիկ ճարահատեալ՝ երդման թուղթը և Անւոյ պահպանութիւնը յանձնելով կաթուղիկոսին՝ գնաց Կ. Պոլիս և այլ ևս չը վերադարձաւ։ Վեստ Սարգիս Պետրոս կաթուղիկոսի հետ նախարարներից ոմանց համաձայնեամբ հպատակութեան թուղթ ուղարկեց կայսեր, ուղարկեց նաև Անւոյ ու արքունեաց բանալիները։ Կայսրը տիրելով Անիին՝ ուրիշ դաւաճանների հետ միասին մեծամեծ պարգևներով վարձատրեց Պետրոս կաթուղիկոսին և Գրիգոր Մագիստրոսին, որ համախոհ դաւաճանող նախարարներին՝ Արարատեան նահանգում եղած իր կալուածները տուեց Յունաց և ի փոխարէն՝ ստացաւ Միջագետքի դքսութիւնը։

Յոյնք Անէին տիրելուց յետոյ, Դուին քաղաքին եւս կամեցան տիրել բայց տեղւոյն ոստիկան Ապուսալար իւր վերայ յարձակուած յոյներին յաղթելուց յետոյ զայրացած՝ սկսեց հալածել քրիստոնեաներին եւ յատկապէս հայերին՝ ստիպելով ուրանալ իրանց հաւատը։ Վահրամ Պահլաւունի իբրեւ հայր քրիստոնէից եւ պաշտպան եկեղեցւոյ՝ յարձակուեց Ապուսալարի վերայ, հալածեց նորան մինչեւ Դուին քաղաքը, եւ մենակ շատ յառաջ գնացած ու Թշնամեաց մէջ մնած լինելով՝ կալանաւորուեց, 80 ամեայ հասակում 1047 թ։ նահատակուեց քրիստոնէական հաւատոյ համար եւ թաղուեց Սանահնոյ վանքում։

Յոյնք Անւոյ թագաւորութիւնը վերջացնելուց յետոյ Հեռք զարկին կաթուղիկոսութիւն եւս վերջացնել. եւ որ Պետրոս կաթուղիկոսին մինչեւ Անին գրաւելը շողոքորթում էին, այնուհետեւ պատճառելով թէ նա աշխատում է հայերին ապստամբեցնել՝ ոչ սորեցին կարնոյ Արծն քաղաքը, իսկ Պետրոս մինչեւ Հեռանալը, Անիում իրան տեղակալ կարգեց իւր քեռորդի Խաչիկ եպիսկոպոսին։ Յոյնք սորանով էլ չբաւականացան, այլ հինց նոյն ինքն Յայտնութեան տօնի օրը կալանաւորեցին Պետրոս կաթուղիկոսին եւ տարան Խաղտոյ-Ահիճ բերդը, իսկ կաթուղիկոսի տեղակալ Խաչիկ եպիսկոպոսին եւս ուղարկեցին Սեւաքար։ Մի քանի ամսից կայսեր հրամանով Պետրոս կաթուղիկոսը Կ. Պոլիս տարուեց իսկ Խաչիկ ուղարկուեց Նորից Անի։ Կայսրը Պետրոսին երեք տարի պահեց Կ. Պոլսում, զանազան սնոտի պատիւներ տուեց շլացնել աշխատելով, մինչեւ որ Կ. Պոլսում եղած հայ մեծամեծների եւ Գագիկ թագաւորի միջնորդութեանը դիմանելով թոյլ տուեց հեռանալ Պոլսից, եւ Պետրոս կաթուղիկոս եկաւ Սեբաստիա, ուր հինգ տարուց յետոյ 1058 թուին վախճանուեց եւ թաղուեց տեղւոյն Ս. Նշանի վանքում։ Հայոց աշխարհի ազգանիերին եւ աւերածութեանց ականատես լինելով եւ 40 տարի վարելով հայրապետական իշխանութիւն։

Պետրոս Ա. Հակամիութեամբն դէպի Յոյները կասկածելի դառնալով հայ իշխաններն եւ ժողովրդի առաջ, Յոյներից էլ բաւական տառապանք կրեց ի խրատ եւ ի զգուշութիւն այն բոլոր մարդոց՝ որոնք իրանց աղգային շահերը կըզոհեն իրանց անոսի փառասիրութեան։ Որովհետեւ դաւաճանութիւնը որչափ եւ հաճելի լինի, դաւաճանը միշտ ատելի է ու ատելի։

Պետրոս Ա. բացի զանազան ճառերից՝ գրեց Մարտիրոսաց, Հանգստեան և Մանկունք կոչեցեալ շարականները։ Պետրոս կաթուղիկոսի ժամանակով որպէս մատենագիր յայտնի էր Գրիգոր Մագիստրոս Պահլաւունի, որ աշխարհական բարձր պաշտօններ և տիտղոններ ունենալով հանդերձ, գրոց, մանաւանդ Սուրբ Գրոյ բաւական հմտութիւն ունէր, և ըստ խնդրոյ Մանուէլ մհմմեատականի՝ ստանաւոր համառօտեց Աստուածաշնչի պատմութիւնը. գրեց զանազան թղթեր՝ որոնց մէջ նշանաւոր են Ասորւոց կաթուղիկոսին գրածները Թոնդրակեցի աղանդաւորների պատճառով. այս աղանդաւորների դէմ զինուած էր Գրիգոր Մագիստրոս ոչ միայն գրով այլև իւր իշխանական ուժովը։ Որպէս մատենագիր նշանաւոր էր նաև Անանիա Սանահնեցի՝ որ Պօղոսի 14 թղթոց մեկնութիւնը, և Հայաստանեայց եկեղեցւոյ ուղղափառութիւնը պաշտպանելու համար Բան հաւաճառութեան ընդդէմ երկաբնակաց ճառը գրեց։ Նշանաւոր էր նաև Արիստակէս Լաստիվերցի, որ ողբալից և սրտաշարժ կերպով ճառագրեց իւր ժամանակի արհաւիրքները։

Գլ. Ծ.

Պետրոս Ա.-ին 1058 թ. յաջորդեց Անիոյ իւր քեռորդին և տեղակալն Խաչիկ Բ։ Տուկիճ կայսրը յաջորդելով իւր հօրը, սկսեց հայերին շատ նեղել. նա լսելով Պետրոս գերատարած կաթուղիկոսի մահը՝ գրաւեց նորա գիւղերն ու ագարակները և Խաչիկից պահանջումէր հանգուցեալ հայրապետի գոյքը՝ որ կարծումէր շատ մեծ լինել, համարելով թէ բագրատունի հարստութեան գանձերը Գագիկ Պօղոս տարագրուելուց յետոյ կաթուղիկոսարանին յանձնուած կը լինին։ Տուկիճ այս անտեղի պահանջի համար Պօղոս տարաւ Խաչիկ Բ. կաթուղիկոսին. և երբ տեսաւ թէ Խաչիկ բացէ իրաց հրաժարվումէ իւր պահանջը կատարելուց ազացուցանելով որ այդպիսի գանձ իրան յանձնուած չէ եղել, կայսրը բարկացած, կաթուղիկոսարանը իւրաքանչիւր տարի վճարելու որոշեալ քանակութեամբ հարկի տակ դրեց, և սպառնացաւ Ծոյն կաթուղիկոս և իշխան կարգել. և մինչ Ծոյներից մի աշխարհական կիւրապաղատութեան պաշտօն և մի հոգևորական՝ կաթուղիկոսական իրաւունք ստանալ խնդրելով՝ խաստանումէին ծանր հարկեր վճարել, այդ բաղդախնդիրներից մէկը նոյն օրը ծանր հիւանդացաւ, իսկ միւսը մեռաւ, այսպիսով Աստուած իւր եկեղեցին այս տեսակ աղօրէն բռնաբարութիւնից ազատեց։

Ցունաց կայսերութիւնը, որ իւր աներաւութեամբ գրաւած Հայաստան աշխարհը Սկիւթացւոց և Պարսից տապատակաւորների կոխան էր թողել, — փոխանակ պաշտպանելու և օրինաւոր հարկ տանելու, ապօրինաբար հարկի տակ էր դնում մ՝այն կաթուղիկոսարանը, որ ազատ էր մահմետական և կուսապաշտ բարբարոսների ժամանակ. որբանով չըքաւականանայաւ այդ կայսերաց գահակալ Տուկիճ, այլ սկսեց հայերին յոյն դարձնելու համար ջանահնար լինել. ուստի և կրօնական իշխիրների խորհրդածութեան համար փոխանակ հոգևորականներկայացուցիչներին դիմելու՝ ձեռք առաւ Փոքր Հայոց իշխաններին. կանչեց իւր մօտ Սեբեքերիմ Թագաւորի Աատոմ և Ապուսահլ որդիներին, որոնք իմանալով կայսեր նպատակը, հեռներն առան գիտնական կարծեցեալ ամն Ցակոբը վարդապետին:

Ցակոբ մարդահաճութեան համար ընդունեց կայսեր առաջարկութիւնը և ի դիմաց բոլոր Հայոց ստորագրութիւն տուեց յունադաւան լինելու. այս ստորագրութեան վերայ հիմնուած երբ կայսրը առաջարկեց արքայազն Աատոմ և Ապուսահլ իշխաններին նորից յունական ծէսով մկրտուել, նոքա հրաժարուեցին: Այս կրօնական տագնապը շարունակվումէր, երբ Հայ իշխանների հրաւիրմամբ Գագիկ բացակայութիւնից դառնալով Կաստանդնուպոլիս՝ ներկայացաւ կայսեր, և տպաւորացանելով Ցակոբ վարդապետի լեզուին, առանց ազգի հաճութեան տուած թղթի անտեղութիւնը՝ առաւ և պատռեց. խոստացաւ գրել մի գաւանաբանական թուղթ՝ Հայաստանեացս եկեղեցու ուղղափառութեան համար և վիճել Ցունաց վարդապետների հետ: Կայսրը ղրկաւ այս առաջարկութեան, և Գագիկ ստանձնեալ թուղթը պատրաստելուց յետոյ՝ կայսեր հրամանով Ս. Սոփիայի եկեղեցում ժողովուած յոյն կղերի առաջ կարդաց և իմաստութեամբ ու համոզութեամբ պաշտպանելով իւր ստանձնած գործը, մանաւանդ ըստ ծիսական մասին, որոնք եկեղեցու ազգայնութեան առ հաւատչեան են, ապացուցեց Ցունաց պահանջի անտեղութիւնը. Ցունաց ազգի, որ Հայ հողին տիրանալուց յետոյ կամենում էին Հայ հոգուն էլ տիրանալ:

Կրօնական վէճերը արքունիքից և կենդրօնից փոխանցուելին գաւառները, և աւելութիւնը Հայի ու յոյնի մէջ այն աստիճան աստակացաւ, որ սկսեցին միմեանց գանահարել, հարստահարել

և սանջել. իբրև օրինակ այս առելութեան՝ ի միջի այլոց համարելու է այս երկու դէպքը *):

Անեցի ոմն Գէորգ չհանդուրժելով Յունաց բարքը, ազատ շրջումէր Անտիոք քաղաքում. Յոյները իմանալով որ նա Հայ է՝ բռնեցին, մօրուքը կարեցին և արհամարհեցին. իսկ Գէորգ վարձեց հինգ հարիւր թուրք և ի վրէժ իրան հասցրած անարգանացը Անտիոք գալուում՝ շատ ասանները աւերակ դարձրեց, տասն և երկու գիւղեր այրեց և վաթսուն յոյներ կալանաւորելով Անտիոքի դռան մօտ սպանեց՝ ասելով. «ես եմ՝ Անեցի Գէորգը, որի մօրուքը կտրեցիք. առէք ձեր աշխատանքի վարձը»:

Միանգամ՝ էլ եօթանասուն հոգի հայեր կարաւանով հասած Անտիոք քաղաքը, որովհետև բարեկենդանի օրեր էին, սկսեցին հրապարակում՝ բացօթեայ ուրախութիւն անել: Յոյները երբ տեսան այս՝ դիմեցին դէպի նոցա. սկսեցին արհամարհել, անարգել, յոխորտալով աքացել. հայերը համբերութիւնից դուրս եկած՝ յարձակուեցին նոցա վերայ և բերան մեծամեծ հարուածներ տալուց յետոյ մերանիսին և սպանելով հալածեցին մինչև տեղւոյն Ս. Պետրոսի եկեղեցին. քահանայք խաչ առետարան ի ձեռին հազիւ կարողացան մեղմել հայերի արդարացի զայրոյթը:

Այս կրօնական պայքարից յետոյ Գագիկ և Ատոմ Արծրունու խնդրանքով երեքամեայ արգելանքից յետոյ Խաչիկ Բ. կաթուղիկոս թոյլտուութիւն ստացաւ ոչ թէ Անի, այլ Փոքր — Հայոց Զահան գալաւի Թաւբլուս աւանը վերադառնալ, ուր և լսելով Հայաստան երկրի աւերը, Անւոյ կոտորածը, և Յոյներից կրած տառապանքը, անհնարին տրտմութիւնից հիւանդացաւ և վախճանեց 1064 թ. վեցամեայ կաթուղիկոսութիւնից յետոյ, որի մեծ մասը վատառնդութեան մէջ անցկացրեց մեծամեծ նեղութիւններով:

Խաչիկ Բ. Կաթուղիկոսի մահից յետոյ մի տարի հայրապետական աթոռը թափուր մնաց. և որովհետև յոյները արգելք էին լինում նոր կաթուղիկոսի ընտրութեան, որպէս զի անտէրունդ հայերին շուտով կարողանան յանդգնաբար դարձնել, այս պատճառով էլ կաթուղիկոսի ընտրութիւնը յետաձգվումէր, մինչև Աբասեան Գագիկ թագաւորի գուստր Մարիամ թագուհին՝ որ շատ սիրելի էր Յունաց կայսերուհուն, նորա միջնորդութեամբ

(*) Զամչ. հատ. Բ. երես 971—972.

կայսրից նոր հայրապետի ընտրութեան հրամանն առաւ։ Այս թղթատուութիւնից յետոյ Աբասեան Գագիկ որ Կարսից վարանդի՝ Սամնգատւոմն էր կենում, բազմաթիւ եպիսկոպոսների և վարդապետների ներկայութեամբ 1065 թուին գումարեց Սամնգատի Ա. ժողովը, ուր կաթուղիկոս ընտրուեց Գրիգոր Մագիստրոսի Վահրամ որդին, որ պատութեան տիղոսով իւր հօրը յաջորդելուց ու ամուսնանալուց յետոյ կամովին անապատ էր քաշուել և կրօնաւորական կեանք էր վարում։ Վահրամ 1065 թուի Ապրիլ ամսումը Սամնգատի մէջ կաթուղիկոսական սուրբ օծումն ընդունեց և Գրիգոր Բ. կոչուեց։

Գրիգոր Բ. վարժ յունական դպրութեան և հմուտ արտաքին ու Սուրբ Գրոց, յունարէնից և ասորերէնից թարգմանեց տօնելի սրբերի վկայաբանութիւնը, ուստի և կոչուեց Վկայասէր։ Գրիգոր Վկայասէր երբ զբաղուած էր գրոց թարգմանութեամբ, վանորէից շինութեամբ ու բարեկարգութեամբ և իւր հօտի հոգևոր պիտոյից հոգացողութեամբ, տեսնելով զարձեալ աւեր և կոտորած Յունաց և Պարսից կողմից՝ ի սիրտ և ի հոգի վշտացած կամենում էր առանձնանալ, ուստի և իւր տեղապահը Գէորգ լուսեցուն ըստ յանկութեան հայ իշխանաց Թաւբլուրում օծեց կաթուղիկոս ու ինքն առանձնացաւ Սեաւ—Լերան մենաստանը։ Այս առանձնութեան մէջ և այս ժողովուրդը դիմումէր Վկայասէրին իբրև մեծ հայրապետի, Գէորգ լուսեցի վշտացած այս բանից մեծամեծ շփոթութիւններ յարուցանելով մինչ կամենում էր ժողովով կարգընկէց անել Գրիգոր Վկայասէրին, իշխաններն ու մեծամեծները շփոթութեանց առաջքը առնելու համար Վկայասիրի գահերեցութեամբ 1072 թ. Սեաւ—Լերան Ա. ժողովը գումարելով գահընկէց արին Գէորգին և ուղարկեցին Տարսոն ուր և վախճանեց, իսկ Վկայասէրն Գրիգոր բնակուեց Մուրսաւաստան կոչուած տեղը։

Ոմն Փիլարտոս հայ—հռոմ բնաւոր, որ ասպատակութեամբ ամենայն կողմ, գալով Մարաշ, Տարօնոյ իշխան Թունիկ Մամիկոնեանին հրաւիրեց իւր մօտ իրան գործակից լինելու, բայց երբ նա չանձն չառաւ, Փիլարտոս Գրիգոր Վկայասէրին ուղարկեց համոզելու որ գայ և երբ այս պատգամաւորութիւնն էս անյաջող անցաւ՝ Փիլարտոս յարձակուեց Թունկի վերայ, բայց սաստիկ ջարդ կրելով՝ յետ դարձաւ Թաւբլուր։ կանչեց իւր մօտ Գրիգոր Վկայա-

սէրին, որ առ երկիւղին չըգնաց, այլ ուղարկելով Հայրապետական գաւազանն ու քօղը՝ առաջարկեց Պետրոս գետադարձի քեռորդի Սարգիս վարդապետին կաթուղիկոսացնել, և Փիլարտոս Ջահան գաւառի Հոնի քաղաքում ժողովակ կազմելով՝ Սարգսին 1073 թ. կաթուղիկոս օծել տուեց Հոնիում։

Վկայասէր կասկածելով Փիլարտոսից՝ եկաւ Անի, ուր մի քանի ամիս կենալուց յետոյ իւր քեռորդի Բարսեղ եպիսկոպոսին տեղակալ կարգեց, գնաց Սեաւ—Լեառը, այցելեց Կոստանդնուպօլիս, Հռոմ և Երուսաղէմ, ուր Փրկչի սնօրինական տեղերին երկրպագելուց յետոյ գնաց Եգիպտոս, մի տարի կացաւ այն տեղ, Մեմփիսի քաղաքի Հայոց վերայ իւր քեռորդի Գրիգորիսին եպիսկոպոս ձեռնադրեց, յետոյ տեղւոյն թագաւորից մեծամեծ պատիւներ ստացաւ և վերադարձաւ ու առանձնացաւ Սեաւ—լերան Արեգի վանքում խստակրօն կենաք Սուրբ Գրոց ընթերցման և թարգմանութեանց պարապելով։

Այս ժամանակները վախճանեց Հոնիում Սարգիս Կաթուղիկոսը և յաջորդեց Թէոդորոս կամ Թորոս, որա օրով յունական ստելութիւնը սկսեց նորից սաստկանալ մինչև այն աստիճան՝ որ Գրիգոր Վկասէրի եղբայր Վասակին ստանում են Անտիոքում՝ նախանձելով որ նա հայ լինելով՝ այնպիսի մեծ պատուի է հասել։ Մի յոյն աբեղայի ներգործեան զոհ գնաց նաև Շիրակացի Վեստ—Խաչատուր իշխանը, որին յոյն աբեղան խեղդեց նորա քնած ժամանակ բարձը բերանին դնելով։

Բագրատունեաց և արծրունեաց հարստութեանց անկումից յետոյ Փոքր-Հայք և յատկապէս Կիլիկիայի կողմերը Հայ իշխանների և մեծամեծների ապաստանարանը դարձան։ այդ տեղերն էին Արծրունեաց արքայազն իշխանները, Խաչիկ Վասպուրականի թոռն՝ Աբլխարիպ իշխանը, որ Տարսոնի և Մամեստիոյ տէր կարգուելով կայսրից՝ նորոգեց Լամբրօն, ուր տեղի ընակութեան կոչաւ Արցախաւ մի մասի իշխան Օշին՝ իւր երկրից վտարանդի Կոստանդնուպօլիս գնալուց և այն տեղից Կիլիկիա վերադառնալուց յետոյ։ Փոքր—Հայքում վտարանդի շրջումէր Գագիկ վատաբաղդ վերջին թագաւորն Բագրատունեաց, որ լսելով թէ Կեսարիայի Մեհրապօլիսը առ կրօնական ատելութեան՝ որ առ Հայս իւր շան անունը տալմն էր կրել, Կեսարիայում պատահելիս՝ գնաց

նորա մնաւ սաուգելուց յետոյ Մեսրապ Երիցն յարաչար և անարգական մահուամբ սպանեց և ինքն սպանուեց յոյներից։

Յունական ասելութիւնն և այս առաւել ճարակ էր գանուում մանաւանդ նորանով, որ օրինաւոր կաթուղիկոսն Գրիգոր Վկայասէր փոխանակ իւր հօտը կառավարելու՝ կրօնաւորական կեանք էր վարում. իւր հաւանութեամբ կարգուած կաթուղիկոսները, որպիսիք էին Սարգիս և քաղցրաձայն ալէլուեա երգելուն համար Ալախօսիկ կոչեցեալ Թէոդորոս կամ Թորոս՝ հակաթոռ և ապօրինի նկատուելով՝ չունէին հարկաւոր ազդեցութիւնը եկեղեցու բարոյական շինութեան համար. Անեցիք պահանջում էին Վկայասէրից կամ գալ Անի՝ և վարել կաթուղիկոսական իրաւունքը կամ թոյլ տալ իւր տեղակալ Բարսեղին՝ որ օծուի կաթուղիկոս. և սատնալով Վկայասիրի հաճութիւնը, Աղուանից Ստեփաննոս կաթուղիկոսի ներկայութեամբ օծումեն Բարսեղին. Փիլարտոս և այս տեսնելով որ Թէոդորոս չէ կամենում Հայրապետական Աթոռը թաւ բլուրից Մարաշ փոխադրել՝ ինքնակամ ոմն Պօղոս վարդապետի կաթուղիկոս օծել տուեց։ Այսպիսով մի հայրապետական աթոռն անուամբ հայրապետեն կոչվում մի և նոյն ժամանակ Գրիգոր Վկայասէր, Թէոդորոս և Պօղոս՝ Կիլիկիայում և նորա շրջակայքում, իսկ Բարսեղ՝ Անիում։ Այս կաթուղիկոս կոչուածների մէջ որովհետև Գրիգոր Վկայասէր կամովին հրաժարուած էր, օրինաւոր կաթուղիկոս Անուոյ Բարսեղն էր, որ տեսնելով հայ ժողովրդի սատակվանքը պարսիկների երեսից՝ բազմաթիւ եպիսկոպոսներով գնաց Պարսից Մելիք Շահ Թագաւորի մօտ, և առանձին հրովարտակ ստացաւ ժողովրդի անդորրութեան և հարկաց թեթեւութեան համար։ Մելիք Շահ Բարսեղ կաթուղիկոսին պատուեց իրաւունք տալով ձողաքարձ խաչադրօշով շրջիլ և ազատօրէն իւր եկեղեցւոյ գործերը տնօրինել։

Բարսեղ վերադառնալով Անի, անցնում գէպ ի Փոքր — Հայք, իշխանութիւնից ձգում Թէոդորոս և Պօղոս կաթուղիկոսներին։ Իւր այցելութեան ժամանակ հրապուրելով մի երիտասարդ Ստեփաննոս անուն սքեղայի քարոզութեամբ՝ որի վերայ շատ գանգատներ կային, փոխանակ նորա վերայ եղած ամբաստանութեան մին դարձնելով պատժելու՝ վարձատրում պարգևելով իւր ձեռքի գաւազանն ու մատանին և կարգելով Շուղր Անապատի վանահայր։ Իւր այցելութիւնները շա-

բանակելով՝ Բարսեղ վերադառնում էր Անի։ Վախճանումեն Թէոդորոս և Պօղոս ապօրինի կաթուղիկոսները, իսկ Գրիգոր Վկայասէր նորից Սրուանդէմ գնալուց յետոյ Թեսուն գաւառի Կարմիր վանքումն է բնակութիւն հաստատում, և իւր ծերութեան վերջին օրերին՝ լսելով որ Բարսեղ կաթուղիկոս այցելութեամբ նորից հասել է Միջագետք՝ Դող—Վասիլ իշխանի հետ կանչում է իւր մօտ և նոցա խնամքին է յանձնում Ապիրատ իշխանի Գրիգոր և Ներսէս որդիքը, որ իւր քեռորդիքն էին, խնդրելով կրթել բարեպաշտութեամբ և խոնարհութեամբ։ Բարսեղ կաթուղիկոս և Դող—Վասիլ այս մանուկներին, (որոնց ընկերանումեն Սարգիս Շնորհալի և Իգնատիոս Մելինէ Ղուկասու աւետարանի) յանձնումեն Սահականնոս վարդապետին։

Բարսեղ կաթուղիկոս Թեսունից երբ կամենում էր Սրուանդէմ գնալ բազմաթիւ ուղեկիցներով՝ Վարդահեր աւանում՝ երբ տանեաց վերայ ժամերգութիւն էր կատարում, տանիքը փուլ եկաւ և իրան սաստիկ վտանգուած տեսնելով՝ պատուիրեց շուտով Սեաւ Լեառը հանցնել և դեռ չըվախճանած՝ հայրապետական քօղը և գաւազանը յանձնելով Գրիգոր վկայասէրի քեռորդի և իւր խնամոյ յանձնուած Գրիգորին՝ պատուիրեց նորան իւր տեղ կաթուղիկոս օծել։ և այսպէս երեսնամեայ կաթուղիկոսից յետոյ վախճանեց։ Գրիգոր Վկայասէրի բացի Սրբոց Վկայաբանութիւնից գրաւոր նշանաւոր երկասիրութիւններն են պատմութիւն Վարուց Ոսկեբերանի, թարգմանութիւն Պրոկղի Ներբողի առ Յովհան Ոսկեբերան. և այլն։

(Շարունակելի) Յ. Վ. Մ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ

ԳԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ

(ԸՍՏ Փ. ՀԱՐՄՍԻ).

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ.

«Հոգեբանութեան պատմական զարգացման տեսութիւնը» գրելիս Ռուս փոխադրողն աչքի առաջ է ունեցել Ռիբլինի ուսուցչապետ Ֆրիդրիհ Հարմնի աշխատութիւնը „Die Philosophie in ihrer Geschichte. S. Psychologie“ (Berlin. 1878) որի շատ տեղերը թարգմանաբար հաղորդել է, մի մասն էլ բաց է թողել և հարկաւոր եղած տեղն էլ ինքը լրացրել։

Այս աշխատութիւնը Ռաբլինից թարգմանելով՝ մատուցանում եմ, իբրև լուսայ՝ Հայ ազգասիրիկ մանկավարժութեան գրականութեանը. սորա ի լոյս ածելը կարևոր համարեցի, քանի որ «Հոգեբանութեան պատմական զարգացման տեսութիւնն» ընթերցողի առաջ կպարզի, թէ հնուց մինչև մեր ժամանակները մարդիկ ինչպիսի հայեացք են ունեցել հոգւոյ վերայ և, վերջապէս, կրճանօթացնի հոգեբանութեան զանազան ուղղութեանց հետ, որոնք ներկայումս գոյութիւն ունին. իսկ այս, եթէ ոչ ամենքին, գոնեա ուսուցիչներին անհրաժեշտ է գիտենալ։

Չարիք եմ համարում յիշել, որ մի քանի օտարազգի բառերոնց իմաստը հայերէն մի խօսքով անհնար էր արտայայտել նոյնութեամբ գործ դրեցի թարգմանութեանս մէջ։

Թիֆլիս. Գաբրիել Տէր Գաբրիելեանց.

I.

ՀԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ.

1. *Հիլոզոիզմ*. Բնութեան վերայ եղած առաջին և ամենահին հայեցագքն ընդունումէ մի նիւթ իրրև կենդանի կամ շնչաւոր ինչ. բոլորովին մէկ է թէ այդ նիւթի սկզբնական ձևն ընդունուի կամ ջուր, կամ օդ և կամ հուր։ Այս սկզբնական ձևին ընծայվումէ (վերաբերվումէ) կեանք, շնչաւորութիւն, որպէս ընդհանուր յատկութիւններ ամբողջ բնութեան. Բնութեան գոյութիւնն ընդունվումէ իրրև յատիտենական և անվախճան կեանք։ Այսպիսի հայեացքը, որով նիւթն և հոգին, անկենդանն և կենդանին մի ընդհանուր հասկացողութեան մէջ են ձուլվում (խառնվում)՝ անուանվումէ *Հիլոզոիզմ* (նիւթ - կենդանի)։ Եթէ հիլոզոիզմի համար հոգին օդ կամ հուր է, ուրեմն, ընդհակառակն նորա համար օդն և հուրը շնչաւորներ են։ Կեանքն ո՛չ թէ նիւթեղէն գործողութեանց հետևանք է համարվում, այլ ընդհակառակն. այս բոլոր գործողութիւնները կեանքի երևոյթներ են համարվում։ Այսպէս, բնութեան բոլոր երևոյթներն ի մի ամբողջացնելով կ՚ունենք բաւական հասկացողութեան մէջ, համարելով նոցա մշտական և անվախճան կերպարանափոխութեան հետևանքներ, ուրեմն հիլոզոիզմը, միևնոյն ժամանակ *Էվոլիւցիոնիզմ* է։ Այս ուսման մասին, յատիտենական, անվախճան և ամեն բանի մէջ թափանցող կեանքի մասին ևս խօսումեն Թաղէսը (640—560 Թ. Ն. Ք. Ծ.), Անաքսիմոսը (մօտ 550 Թ. Ն. Ք. Ծ.) և Դիոգինէս Ապողոնացին (մօտ 470 Թ. Ն. Ք. Ծ.), որոնք աշխարհիս վերայ բոլոր կատարուածն ընդունումեն մի ընդհանուր կենդանի սկզբի (աղբիւրի) ձևարգացման երևոյթ և աստիճան։ Թաղէսը հոգին վերաբերումէ մագնէզին, որովհետև սա ըստ երևութին ինքնակամ շարժողութիւն ունի և ըստ նորա կարծեաց ինչ որ շարժվումէ, նա հոգի ունի։ Բնութեան երևոյթների մէջ թագաւորող կարգ ու չափից Դիոգինէս Ապողոնացին եզրակացնումէ, որ ամենքի սկզբնապատճառն օդն է, որ բանականութիւն ունի։ Ամեն մի կենդանուց հոգին օդ է, որ աւելի տաք է քան թէ դրսի օդը, բայց արեգակի մօտ եղած օդից աւելի պաղ է։ Կենդանի գոյացութիւնների մարմնոց տաքութեան մէջ եղած տարբերութիւնը Դիոգինէս համարումէ իրրև ապացոյց նոցա շնչաւորութեան զանազան աստիճան լինելու։ Միւս կենդանիների հետ համեմատութեամբ մարդու հոգւոյ բարձրութիւնը (վսեմութիւնը) նորանից է առաջացած, որ մարդս՝ դէպի հողը խոնարհած չլինելուն պատճառաւ, աւելի մաքուր օդ է շնչում։ Հոգեկան բոլոր գործակատարութիւնները շնչառութիւնից կախումն ունին։ Դիոգինէսը չբլինելով ոչ մատերիալիստ ոչ էլ սպիրիտուալիստ, և չբկարողանալով հոգին մարմնից պարզ որոշել, նոյն իսկ օդը համարումէ շնչաւոր ինչ, որովհետև հիլոզոիզմի համար անշունչ նիւթ գոյութիւն չունի, նոյնպէս ինչպէս որ գոյութիւն չունի և անմարմին հոգին։

Ըստ Հերակլիդի հոգին նման է հրոյ, որովհետև ըստ նորա կարծեաց յաւիտենական — կենդանի և բանական հուրը բոլոր նիւթերի էութիւնն և սկիզբն (աղբիւրն) է կազմում։ Աչալրջութեան ժամանակ հոգին գտանվում ընդհանուր աստուածային բանականութեան հետ ունեցած հաղորդակցութեան մէջ. այս վերջինս (բանականութիւնը) հոգին իր մէջ շնչառութեամբ է ընդունում, և խորհելով նորա համաձայն, հասնում ճշմարտութեանը։ Իսկ քնի մէջ, երբ զգացողութեան դրսնորանները խուլ են (անգործ են, փակ են), հոգին աշխարհից հեռանում կորցնում յիշողութիւնն և մինչև անգամ բանականութիւնը, յառաջացնելով երևակայական և խաբուսիկ ցնորքներ։

Հոգւոյ վերայ եղած առաջին և ամենահին հասկացողութիւններն առաջանումն ընդունած (ստացած) տպաւորութիւնների իրար հետ համեմատելուց։ Մարդս ինքն իւր անձին աւելի յայտնի գոյացութիւնն է, և այս պատճառաւ էլ, համեմատութեամբ իր հետ, բնութեան բոլոր երևոյթներն ընդունում իբրև կենդանի, շնչաւոր մի ինչ. իսկ միւս կողմից, հոգւոյ հասկացողութիւնն որոշում նա արտաքին աշխարհի նիւթեղէն երևոյթների հետ համեմատութեամբ։ Հոգին համեմատվում երբեմն ջրի, երբեմն շարժական օդի և երբեմն էլ կենդանի հրոյ հետ։ Եթէ մարդս բնութեան բոլոր առարկաների մէջ իւր ընդածին գոյացութիւններ է տեսնում, ուրեմն ընդհակառակն, նա պէտք է և իւր հոգին համարէ ընդածին միւս բոլոր բնութեան։ Այսպէս, հիլոզոիզմը, լինելով ուսումն զարգացման մասին, միևնոյն ժամանակ է ուսումն բնութեան ընդհանուր նոյնութեան մասին, և այս մտքով աւելի բազմակողմանի է երևում, քան թէ նորանից առաջացած սպիրիտուալիզմն և մատերիալիզմը, որոնք բղխումն կամ հոգւոյ միակողմանի հասկացողութեան գումարանութիւնից, կամ նիւթի միակողմանի հասկացողութեան ջատագովութիւնից։

2. Հոգւոյ եւ նիւթի հասկացողութիւնների բաժանումն։ Նախ քան հոգւոյ և նիւթի հասկացողութիւնների բաժանումն բնութեան մէջ կատարուած գործողութիւնները պիտի աւելի խոր հասկանալ։ Սկսելով խոր մտածել արտաքին նիւթերի փոխադարձ ներգործութեան ձևերի վերայ, մարդս մեքենական ուժի մասին հասկացողութիւն է ստանում։ Այսինքն, նա գտնումէ, որ զանազան տեսակ շարժողութիւնների մէջոցով նիւթի մասերն երբեմն միմեանց հետ միանումեն, երբեմն էլ մէկը միւսից բաժանվում։ Այսպէս, երևումէ տարրերի կամ նիւթի մասերի, որոնք երբեմն միացած և երբեմն բաժանուած են լինում՝ և այն պատճառի երկդիմութիւնը, որ առաջացնումէ նոցա միութիւնն և բաժանումն։ Նիւթի և նորան շարժող ուժի այս զանազանութեան հետ շաղկապվումէ և հոգւոյ ու նիւթի սկզբնական զանազանութիւնը։ Այս պատճառաւ, այս տեսակ երկդիմութեան հայեացքի գրաւականը պիտի այն ուսումն համարել, որի մէջ առաջին անգամ երևումէ մեքենայական հայեացքը բնութեան վերայ, այսինքն, որի մէջ

բնութեան գործողութիւնները բացատրվումեն նիւթի մասերի միաւորութեամբ և բաժանմամբ։

Այս մեքենայական տեսութեան հիմնադիրը պիտի համարել Անաքսիմանդրին (մօտ 610 թ. ն. ք. ծ.)։ Նորա հայեացքով միաւորումն ու բաժանումն կախուած են տաքի և ցրտի, չորի և խոնաւի հակադրութիւնից։ Բայց Անաքսիմանդրը նիւթից որոշվող շարժող ուժի վերայ պարզ հասկացողութիւն չկազմեց և այս ուժին անվախճան անուն է տալիս, որ բառական անորոշ է։ Աւելի լաւ մշակած հայեացքը մենք գտնումենք Էմպեդոկլի (մօտ 450 թ. ն. ք. ծ.) ուսման մէջ։ Էմպեդոկլն ուսուցանումէ, որ բնութեան բոլոր երևոյթները չորս տարրների՝ հրոյ, ջրի, օդի և հողի միութեան և բաժանման մէջ են կայանում։ Այս միաւորութիւնն և բաժանումն առաջացնող ուժերն Էմպեդոկլի ուսման մէջ աւելի լաւ պարզ արտայայտած են և հոգեկան (վերացական) բնաւորութիւն են կրում։ Նա այդ ուժերին անուանումէ սէր և նախանձ։ Սէրը, բնութեան զանազան տեսակ տարրները միացնելով՝ առաջացնումէ միութիւն. իսկ նախանձը, նոցա բաժանելով՝ բազմութեան սկիզբն է դնում։ Սիրոյ և նախանձի տիրապետութիւնը բնութեան մէջ մշտնջ յաջորդումեն։ Կենդանի և շնչաւոր նիւթերն ստեղծվումեն միմեան նոցա իրանց մասերի աստիճանաբար ներդաշնակ միաւորութեամբ։ Էմպեդոկլը բոլսերին էլ է հոգի և շնչափման ընդունակութիւն յատկացնում։ Էմպեդոկլի հայեացքի վերայ իշխումէ կրկին հիլոզոիզմը, որ է հոգեկան և նիւթական հասկացողութիւնների շփոթումն։ Զգայական ընդունած տպաւորութիւնները նորանից են առաջանում, որ մեր զգայարանքների գործարանների մէջ առարկաներից ստացած գրգիռներ են թափանցում։ Մենք ճանաչումենք (գտնումենք) նմանը նմանով, այսինքն բնութեան իւրաքանչիւր տարրը մեր մէջ եղած նոյնանման տարրի միջոցով ենք գտնում (ճանաչում)։

Հոգուց և նիւթի մէջ եղած զանազանութիւնը պարզ կերպով առաջին անգամ Անաքսագորան (500—423 թ. ն. ք. ծ.) ցոյց տուեց։ Նա կատարելապես որոշումէ բանականութիւնը, Հոգին և Նիւթ։ Ըստ նորա կարծեաց՝ նիւթը շարժական զանգուած է, ինքն իւր շարժական ուժից զրկուած։ Այս նիւթը բաղկացած է անթիւ անվերջ մանր պարզ բաղկացուցիչ մասերից, որոնք մէկը միւսից զանազանվումեն տեսքով և յատկութեամբ։ Նոցանից ամեն մին իւր բաղկացութեան մէջ կատարելապես միատեսակ է, որոյ համար Արիստոտէլը նորան Հոմէոմէրիա (միատեսակ մասեր ունեցողներ) է անուանում։ Հոգին նիւթից անկախ գոյութիւն ունի և նորանից զանազանվում իւր պարզ սկզբով, որ զանազան մասերի խառնուրդից չէ բազկացած։ Ոչ մի բանի հետ չխառնուելով և ինքն իրան, ոչ մի բանից անկախ գոյութիւն ունենալով, հոգին իշխումէ բոլոր նիւթերի վերայ։ Հոգին միշտ ինքն իրան է հաւասար. այն ինչ՝ նիւթը կարող է ամեն ձևափոխութեան ենթարկուել։ Նա (հոգին) աշխարհիս մէջ ամեն տեսակ շար-

ժողովրեան և ամեն տեսակ կարգի աղբիւրն է, իսկ նիւթը միմիայն ընդունում թէ շարժողութիւնն և թէ կարգը։ Այսպէս Անաքսագորան պարզ որոշումէ՝ հոգին իբրև շարժողութեան պատճառ, իսկ նիւթը՝ իբրև շարժական միջնորդը։

Անաքսագորան, Էմպիդոկլի նման, հոգին վերագրումէ ոչ թէ բոյս կենդանիներին, այլ և բոյսերին։ Արդէն գերազանցական բանականութեան գլխաւոր պատճառը նա համարումէ ձեռքերը։ Ճանաչողութիւնը կատարվումէ ոչ թէ միանմանութեամբ, այլ ընդհակառակն, հակադրական միջոցով, այսինքն տպաւորութիւնը մեր մէջ կազմվումէ իւրացնելով այն, ինչ որ մեր մէջ պակասումէ։ Ճշմարտութիւնը բացվումէ (յայտնվումէ) ոչ թէ զգացողութեամբ, այլ բանականութեամբ։ Առհասարակ, մեր ճանաչողութիւնը շատ սահմանափակ է՝ «զգացողութիւնները նեղ են, հոգին թոյլ, իսկ կեանքը կարճ»։

3. Մաերիալիզմ։ Ծունաց սկզբնական փիլիսոփայութեան երրորդ ուղղութիւնը հիւլէբանութիւնն է, որ ձգտումէ բացատրելու, թէ ընութեան բոլոր երևոյթներն առաջացել են անշունչ, նիւթեղէն մասնիկների կամ հիւլէների միաւորութիւնից և բաժանումից։ Այս ուսումը կատարելապէս նիւթաբար է։ Հիւլէբանութեան հայեացքն ընդունումէ միմիայն մի նիւթ, բաղկացած չափազանց մանր անհատ մասնիկներից, որոնք թէ մեծութեամբ և թէ ձևով միմեանցից տարբերվումեն։ Հիւլէները ստեղծուած չեն և չեն էլ կարող ոչընչանալ, այնպէս որ նիւթերի տեսանելի ծագումն և ոչնչանալը միմիայն նոցա բաղկացուցիչ տարրերի միաւորութեան և բաժանման հետևանքն է։ Այս ուսումը, ընութեան գործողութեանց վերայ ունեցած հայեացքի մէջ՝ վերոյիշեալ մարդոց ուսման հետ մերձենում է բայց հիւլէբանները նիւթից դուրս մի առանձին ոչ մի շարժիչ ուժ չեն ընդունում։ Շարժողութիւնը հիւլէների մշտական յատկութիւնն է, և այս պատճառաւ, այս յատկութիւնն առաջացնելու համար — մի նիւթական պատճառի պէտքը չէ զգացվում։ Շարժվող հիւլէները, միմեանցից մեծութեամբ և ծանրութեամբ, ուրեմն և արագութեամբ տարբերուելով՝ միմեանց հրոխաղարձ հանդիպումն և գոյացնումն այն զանազան տեսակ տեսանելի նիւթերը, որոնց մենք տեսնումենք։

Հիւլէբանութեան հիմնադիրները, Լակիպն (անյայտ է թիւը) և Դէմօկրիտը (460—360 թ. ն. ք. ծ.)՝ մարդու հոգին համարումէին բոլորակ, տափակ և շարժվող հիւլէների հաւաքածու, որոնք (հիւլէները) մարդոյ կենդանութեան ժամանակ նորա մարմնոյ մէջ են փակուած, իսկ նորա մահից յետոյ դուրս գալով նորանից ցրվումեն։ Զգացումն առաջանումէ նիւթերից բաժանած իրանց նման մասնիկների միջոցով, որոնք մարդու մարմնոյ մէջն են թափանցում զգայարանքների միջոցով։ Բայց նիւթերի մասին այս տեսակ զգացողական գիտակցութիւնը միմիայն մութ հասկացողութիւն է տալիս, և միմիայն մտածողութեան միջոցով ենք հասկանում նոցա իսկական էութիւնը։ Հոգւոյ մէջ մտած նիւթային մասնիկ-

ները, յիսո դուրս գալիս՝ նորա մէջ ցանկութիւններ և ձգտումներ են առաջացնում։

Այսպէս, հին մատերիալիզմը նորից նորանով է զանազանվում, որ առաջինը հոգին ընդունում իբրև մի տեսակ նուրբ և շարժական նիւթ, այն ինչ երկրորդի համար հոգեկան երևոյթները միմիայն նիւթի շարժողութիւններ են (դրութիւններն են)։

4. Պիթագորականների հոգեբանութիւնը։ Հերոդոտի խօսքերին նայելով Պիթագորոսը (մօտ 540—510 թ. ն. ք. ծ.) մի տեսակ կրօնական ընկերութեան հիմնադիր էր, և, բացի կրօնական հարցերով զբաղուելուց՝ պարապումէր նաև գիտնական հարցերով։ Պիթագորեան ընկերութիւնը մշակեց բնութեան վերայ մի առանձին տեսութիւն և մեկնութիւն։ Պիթագորեանները նիւթերի էութիւնն թուի մէջ էին տեսնում։ Ենթադրելով, որ նիւթի մէջ էականը նորա քանակականն որոշելն է, և դեռ գիտակցութեան մէջ չորոշելով նորա վերացական և նիւթական կողմը, նորա յայտնի կերպով նիւթին վերաբերումէին այն, ինչ որ մարդս ինքն կարող է նիւթի վերայ հաշուելով առաջացնել, այսինքն թիւ։ Բայց թէ Պիթագորեաններն այս ընդհանուր սկզբունքը մասնաւոր հարցերը լուծելու ժամանակ ինչպէս էին գործ դնում, սորա մասին շատ քիչ հաւաստի տեղեկութիւններ ունինք։ Միմիայն յայտնի է, որ զանազան առարկաներն և բնութեան երևոյթները նոքա վերացուցանումէին թուական յարաբերութեանց. մէջ իսկ միւս կողմից, այս յարաբերութեանցը պլաբանական և բարոյական նշանակութիւն էին տալիս։ Այսպիսի ընդհանուր ուղղութեան ժամանակ պարզ հասկանալի է, որ բնական (ֆիզիքական) գործակատարութիւններից ուշադրութիւնը նորա վերայ էին գարձնում, որի ընթացքն իսկապէս պայմանաւորվումէր թուաբանական յարաբերութիւններով։ Պիթագորեաններն էին, որ առաջին անգամ իրենց հանճարեղ մուզիկայի ներդաշնակութեան թուական կանոնը, և այս պատճառաւ էլ ոչինչ զարմանալու բան չկայ, որ և ներդաշնակութեան հասկացողութիւնը, որի մէջ նոքա իրանց սկզբունքի իրագործումն էին տեսնում, նոցա ֆիզիքայի և հոգեբանութեան մէջ այսպիսի նշանակութիւն ստացաւ։ Գոնեա, Պղատոնից մենք գիտենք, որ Պիթագորեան երևելիներից մինը Փիլալայոս (մօտ 460 ն. ք. ծ.), հոգին մարմնոյ ներդաշնակութիւն էր համարում։ Եւ որովհետև ներդաշնակութիւնն անհետանումէ նորա հետ միասին, որից նա առաջանումէ, ուրեմն Փիլալայոսի հայեացքը պաշտպանողը սորանից հետևեցնումէ, որ հոգին մահկանացու է։ Բայց այս ուսման միւս մանրամասնութիւնները մեզ յայտնի չեն. այնպէս և չենք կարող դատել, թէ այս ուսումը Պիթագորեանների մէջ, ո՛ր աստիճանի ընդհանրացած էր։ Ամենայն դէպքում, այս ուսումը նոյն իսկ Պիթագորեանների ուսմանը հոգիների տեղափոխութեան մասին հակառակ է, որ ուսուցանումէ, թէ հոգին մարմնուց բաժանվողն է։ Իսկ ինչ որ վերաբերումէ այն

հոգեկան հայեացքներին, որ յետագայ գրողները Պիթագորեաններին են յատկացնում՝ կարօտ է ստուգութեան։

5. Ինքնաճանաչութեան սկզբունքը։ Թէև Սոկրատէսի (469—399 թ. ն. ք. ծ.) սեպհական հոգեբանական հայեացքներն ոչինչ նորութիւն չեն ներկայացնում, բայց այնու ամենայնիւ, նորա անուղղակի, կողմնակի ազդեցութիւնը հոգեբանութեան զարգացման վերայ շատ մեծ էր։ Սոկրատէսը, մերժելով նախընթաց իմաստունների ֆիզիքական տեսութիւնները՝ փիլիսոփայութեանը ցոյց տուեց գործնական, բարոյական ուղղութիւն, և այս ուղղութեան միջոցը — ինքնաճանաչութիւնն է։ Հէնց սորանով Սոկրատէսն իւր հետևողների ձեռքին հոգեբանական հետազօտութեան մի կանոնաւոր մեթոդ տուեց։ Այս մեթոդի գործադրութեան շնորհիւ առաջին անգամ երևաց հոգեբանութիւնն իբրև գիտութեան մի ճիւղ, իբրև ուսումն անհատական հոգւոյ մասին։ Բոլոր բարոյականութիւնը բանականութեան կանոնաւոր գործունէութեան վերայ հիմնելով, այնինքն գիտութիւնն ընդունելով իբրև առաքինութեան աղբիւր, Սոկրատէսը հէնց այս հայեացքի միակողմանութեամբ օգուտ տուեց հոգեբանութեան. որովհետև այս միակողմանութիւնն յետագայ իմաստուններին առաջ մղեց աւելի մանրամասնաբար ուսումնասիրելու հոգեկան գործակատարութեանց փոխադարձ յարաբերութիւնները, և միևնոյն ժամանակ փորձ արին նոցա դաս դաս բաժանելու։

(Շարունակելի)։

Թարգմ. Գ. Տ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆՑ.

ՕՐՕՐ.

Ախրուն մանուկ, լայ մի լինիլ,
Անուշ քունդ զուր մի կարիլ.
Մինչ սև լազդը քեզ չէ գաած՝
Ուրախ քնիր, ուրախ վեր կաց.

Օրօրօցում՝ հանգիստ քնիր,
Երբ կարթնանաս՝ գիրկս մտիր.
Թէ քաղցած ես, կաթ էլ կըտամ,
Չեմ մոռանալ քեզ ոչ մի ժամ։

Բազկացս մէջ խայտա, ցնծա,
Մայրական կաթս անուշ արա.
Խաղա, գառնուկ, օրքան կուզես,
Ուրախ եղիր՝ մինչ մանուկ ես։

Կըգայ օրը՝ կըմեծանաս,
Ինձպէս ցաւոց տէր կըդառնաս,
Կեանքի խայտը ուսիդ գրած՝
Մինչ գերեզման պէտք է դու լսա։

Գրաշար Ներսէս Տէր Աւետիքեանց.

ԱՋԳԱՅԻՆ

Վերջացան Ձեմարանի տարեկան քննութիւնները. յաջող քննութիւնից յետոյ իրանց ուսման ընթացքը աւարտեցին

1, Աստուածատրեան Խաչատուր Ուչքիլիսեցի
2, Խաչատրեան Մանուկ Առատպատցի
3, Հախինազարեան Մեսրոբոս Ագուլեցի
4, Մելիք Շահնազարեան Սողոմոն Նուշեցի
5, Մուրատեան Նիկողայոս Փիշնեաձի
6, Սուլթան - Շահեան Մելքոն Նոր—Նախիջեւանցի
7, Յովհաննիսեան Տիգրան Երեւանցի
8, Տէր Յովհաննիսեան Տիգրան Տաթեւացի
9, Տէր Վրթանիսեան Փրիստափոր Ադրիանուպոլցի

որոնք, մրցանակագիրները ստանալուց յետոյ յիշելով Մայր Աթոռոյս և Ձեմարանի շնորհը, որ յընթացս ուսումնառութեան վայելել են բարոյապէս և նիւթապէս, փոքրիկ իւրեք ցանկանալով հրախտագէտ գտնուել, ինչ յայտարարութեանս ստորագրեալները խնդրեցին Մինօդից բարեհաճել ընդունել իրանց միամեայ առանց ակնկալութեան ծառայութիւնը Ձեմարանում վերակացութեան և Ս. Ե. ու մասամբ Գ. դասարաններում ուսուցչութեան պաշտօններով՝ ըստ յարմարագատութեան ուսուցչական ժողովոյ և վարչութեան Ձեմարանի. գրելով ըստ այսմ.

Ի լուսաւորչական Հայոց Սինօդն Սրբոյ Էջմիածնի

Ծուսումնասիրաց որդեգրաց Ձեմարանի

Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի

Ամենապատուարհ խնդիր,

Ձեր աւարտելոյ յաջողութեամբ Տեառն զընթացս ուսման մերոյ Յ. Լուսաւորչի, զամն ինն վայելեալ գոլով ի շնորհս Մայր Աթոռոյ Ագգիս, եբախտապարտ համարիմք զմեզ. ուստի և իղձ է մեզ՝ ստորագրելոցս գնել փոքրու իւրեք ծառայութեամբ մերով երախտագէտ գտանիլ առ բարերար Մայր Աթոռն Ագգիս և առ Ձեմարանն նորին.

Արդ՝ առ ի յայտնելոյ զշնորհակալիս մեր և առ ի հասանելոյ այսպիսւմ սրտեռանդն բաղձանաց մերոց, եթէ բարեհաճեսցի Սինօդդ, ամենայն սիրով յանձն առնուլմբ միամեայ ժամանակաւ առանց իրիք ակնկալութեան զդաստատութիւն ՅԱ. յԲ. և ըստ մասին յԳ. դասարանս խոստանալով միանգամայն կատարել զբովանդակ պաշտօն վերակացութեան, քարտուղարութեան և եթէ հարկ լիցի և մատենադարանապետութեան, խնդրելով միայն տալ մեզ միջոց կրկնոյ և եթ ըստ վայելչութեան չափաւոր և համեստ կենցաղի, Ակն ունելով անօրէնութեան Սրբազան Անդամոց Ատենիդ մնամք ամենախոնարհ որդիք.

Աստուածատուր Խաչատրեան
Մանուկ Խաչատրեան
Սողոմոն Մ.—Շահնազարեանց
Մելքոն Սուքիաս-Շահխանց
Քրիստափոր Տ. Վրդանիսեան
Նիկողայոս Մուրատչեան
Մարտիրոս Հախնազարեանց

Ի 1885 ամի 10 Յունիսի
Ի Ս. Էջմիածին,

Այս յայտարարութիւնը յանուն Սինօդի ստորագրեալ յարգելի ուսանողք ներկայացրին տեսչի ճեմարանի Գեր. Տէր Գրիգոր Սրբազան եպիսկոպոսի որ յայտարարութեամբ ի 10-ն ամսոյս ի. 125 ներկայացրեց Սինօդի գրելով ըստ այսմ.

Ի ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՕԴԻՆ ՍՐՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ

Ի պաշտօնակատարէ Տեսչի ճեմարանի
Ամենախոնարհ յայտարարութիւն,

Ուսումնասիրտ որդեգիր ուսանողք Գ. Լսարանի ներկայացուցին ինձ առանձին դրութեամբ զնդիրս զայս և զպատճէն նորին խնդրելով զիսկականն մատուցանել Սրբազան Ատենիդ իսկ զպատճէնն՝ պահել ի գործս ճեմարանիս.

Որպէս տեսանել ունի Սրբազան Ատենդ, ուսանողք, որք մատուցանեն զնդիր կցեալն ընդ սմին, յայտնելով զսրտեռանդն շնորհակալիս վասն շնորհացն Մայր Սուրբ Աթոռոյ յորս վայելեցին զամս ինն ի ճեմարանի՝ ի շարս որդեգրաց, ի հաւաստիս երախտագիտութեան, առանց իրիք ակնկալութեան խնդրեն յանձնել ինքեանց միամեայ ժամանակաւ զդաստատանդութիւն Ա. Բ. և ըստ մասին՝ Գ. դասարանաց ընդ պաշտաման վերակացութեան, քարտուղարութեան և մատենադարանապետութեան ըստ յարմարագատութեան և որոշման Վարչութեան ճեմարանի և Ուսուցչական Ժողովոյ նորին.

Ս յս արտայայտութիւն զգացմանց նոցին կրկնակի ունի արդիւնս, նիւթապէս՝ զի հետևող լեալ նոցին, որք յետ նոցա աւարտելոց են հետզհետէ,

որպէս զօսվորութիւն և զգարտ անհրաժեշտ՝ ծառայելոց են ի Ճեմարանի Մայր Աթոռոյս որով խնայողութիւն լինի յօգուտ գանձարանի առ տարին աւելի քան զ4000 րուբլիս, բարոյապէս՝ զի պարտաճանաչութիւնս այս զօրացեալ յուսալ տայ ի ժամանակին կազմել զցանկալին միաբանութիւն ուսումնական ի Մայր Աթոռս ի բարոյական շինութիւն եկեղեցւոյ մերոյ սրբոյ։

Ջալայայտ է Սրբազան Առենիդ Թէ առաջարկութիւն այսպիսի, որ ըղկրկնակի ունի շահս նիւթական և բարոյական՝ պէտս ունի քաջալերութեան։

Զհիշատակեալն խնդիր ուսումնասարտ ուսանողաց Գ. Լսարանի ընդսմին մատուցանելով Սրբազան Առենիդ խոնարհաբար խնդրեմ զարթեր անօրէնութիւն Դորին կարելին փութով՝ առ ի աներկմիտս առնել զխնդրատուս ի բարի ցանկութեան իւրեանց։

Ցարգելի ուսումնասարտները ի նկատի ունելով որ թերևս ուշանայ լրանց տրուելիք պատասխանին՝ ի հաւատս երախտագիտական զգացմանց ի 23-ն ամսոյս կիւրակէ օրը, յետ Սրբոյ Պատարագին հաճութեամբ Ամենապատիւ Տեղակալ Սրբազան Հօր և Սրբազան Անդամոյ Սինօդի հանգստեան պաշտօն կատարել տուին հանգուցեալ ի Տէր Գէորգ Դ. Կաթուղիկոսի գերեզմանին վերայ ի ներկայութեան միաբանութեանս, աշակերտաց Ճեմարանի և բազմախուռն ժողովրդեան. հանգստեան պաշտամանն ժամանակ ի դիմաց ուսումնասարտների Մանուկ Խայտարեանը կարդաց մի պատշաճաւոր ճառ, զեղուն զգացմամբ, Ա յս, թէև սխուր, բայց մխիթարական հանդէսը վակեց Ամեն. Տեղակալ Սրբազան Հայրը՝ «Հոգւոյ» մաղթանքով. իսկ ուսումնասարտք ի ծունկ իսնարհելով հանգուցեալ ի Տէր Գէորգ Դ. Վ.Ե.Կ. Կաթուղիկոսի գերեզմանը համբուրելոյ յետոյ, համբուրեցին և Ամենապատիւ Տեղակալ Սրբազան Հօր աջը, որ օրհնելով՝ յաջողութիւն բարեմաղթեց։ Նոյն յաջողութիւնը և խմբագրութիւնս է բարեմաղթում՝ աղօթելով որ անսասան մնան և յարատևեն լրանց ազնիւ զգացման մէջ ի պայծառութիւն ազգի և եկեղեցւոյ՝ որոյ շնորհիւ վերածնուած՝ գառնում են դէպ ի ազգը լրանց առաքելութեան սուրբ նպատակը ի կատար ածելու։

Տեսնելով Ճեմարանի բարգաւաճումն, և այն համակրութիւնը որ ազգը տածում է դէպի այդ սուրբ հաստատութիւնը, ուր պատսպարվում են թող թշուառական գիշերօթիկներն ու երիտասարդներն մօտ 170 գիշերօթիկ որդեգիր մանուկներ ընդհանրապէս գիւղացի չքաւոր ընտանիքներից՝ Մայր Աթոռս լրան բարեացակամ ջանքերուած է գնում. մանաւանդ տեսնելով որ կան մար-

դիկ և հատատուածիները, որոնք օգնութեան ալ կարկառելով՝ ցանկութիւն են յայտնում ուսումնասիրութիւն յաջողակագոյնների բարձրագոյն ուսումնարաններ ուղարկել որոշ պայմաններով կատարելագործուելու և ձեմարանիս մէջ ի ժամանակին՝ պաշտօն վարելու։ Այսպիսի բարեսէր անձանց շարքում առաջին տեղ է բռնում Մեծ. Պ. Աղէքսանդր Մելիք—Հայկազեան, որ մի թոշակաւոր ունենալով հանդերձ հեռագրով յայտնել է Սրբազան Տեսչին թէ ցանկանում է երկամեայ ժամանակաւ տարեկան 800 րուբլիով մի երիտասարդի էլ ուղարկել Եւրոպա կատարելագործուելու՝ եկեղեցուն ցմահ ծառայելու պայմանով։

Աշխատանք Աստուծոյ, որ մեր ազգի մէջ Մելիք—Հայկազեաններ շատ յարուցանէ։

Աստուած յարուցանում է մեր ազգի բարոյական շինութեան համար որդիք Աբրահամու, որոնք մին միւսին օրինակ և հետևող լինելով իրանց բարեգործութեամբ ընդհանուր յարգանաց և յաւերժական յիշատակաց արժանի գործ են թողնում և ահա ի հաստատիս՝ հանգուցեալ Թադէոս Աւագ քահանայ Բուդաղեանի կտակի պատճէնն, որ ստացաւ խմբագրութիւնս Սիւնեաց՝ ի հրատարակել։

Պատճէն կտակի հանգուցեալ Թադէոս աւագ քահանայի Բուդաղեանց ի Բագու։

«Յանուն Ամենասուրբ երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն։

Որովհետև ըստ նախատատահմանական վճռոյն Աստուծոյ հարկ է ամենեցուն մարդոյ մեռանիլ, վասն որոյ ես, ներքոյ ստորագրեալ Թադէոս աւագ քահանայ Բուդաղեանցս յիշելով զբան Առաքելոյն Պետրոսի թէ «կարճ յեղ մահուն հատատուն է» մինչդեռ եմ ի կատարեալ բանականութեան և յառողջ դատողութեան իմոյ, աւանդեմ՝ զոյս կտակ իմ՝ հարազատ և անբաժան եղբարց իմոց՝ Մովսիսի, Եղիայի և Սնոլքայ և որդւոցս՝ Սմբատայ և Երուանդայ Բուդաղեանց յետագայ կարգաւ։

Նախ, պատուիրեմ վերոյիշեալ հարազատ կրտսեր եղբարց իմոց և հարազատ երկուց որդւոցս՝ որք անբաժան են ընդ եղբարցս, միշտ պատուել զամուսինն իմ ըստ ամենայնի իբրև զհարազատ և զսիրելի ծնող՝ և եթէ կայցեն և բնակեսցին ամենեքեան ի մի-

ասին, որպէս ի կենդանութեան իմոյ լեալ են մինչև ցայսօր ի մի սիրտ և ի մի հոգի, բարւոք առնիցեն, իսկ եթէ հարկ լիցի բաժանիլ նոքօրեակաւորապէս զկնի մահուան իմոյ, արդէն իսկ ես իբրև Հայր եւ աւագ եւ յարգի եղբայր իւրեանց՝ դնեմ ի վերայ նոցա այսինքն ի վերայ եղբարց իմոց զսուրբ պարտականութիւնն, որպէս զի յարգելով զիս, զբանս և զերախտիս իմ սիրեսցեն յամենայն ժամ զորդիս իմ զՄհիտան ասեմ և զՆերսէսն իբրև զանձինս իւրեանց, և խղճի մտաք և սուրբ պարտականութեամբ համարեսցեն զնոսա իբրև զհարազատ երկուս եղբարս ինքեանց և ըստ այնմ բաժանեսցին ի միջի իւրեանց զամենայն շարժական և զանշարժ գոյս և զկալուածս մեր։

Երկրորդ, կամեմ միանուագ ըստ անբռնադատ և յօժարակամ յանկութեան իմում ի նիւթական կարողութեանց մերոց։

1, Մարդասիրական ընկերութեան Հայոց Բագուայ մի հազար րուբլի արծ. (1000 ր.)։

2, Դէորգեան ճեմարանի Հայոց սրբոյ Էջմիածնի հինգ հարիւր րուբլի արծաթոյ (500 ր.)։

3, Ցօգուստ Բագուայ Բարեգործական աղքատասիրաց ընկերութեան կառուցանելի աղքատանոցին երեք հարիւր րուբլի արծ. (300 ր.)։

4, Վանից սրբոյն Ստեփաննոսի Նախավկային Սաղմանու գեղջ չորս հարիւր րուբլի արծաթոյ (400 ր.) վասն շինել տալոյ ի վերայ կաթուղիկէի նորին զի յարմարագոյն և ղեկեղեցիկ խաչ։

5, Թեմական հոգևոր դպրոցին Հայոց Նամախուոյ երեք հարիւր րուբլի արծաթոյ (300 ր.)։

6, Բագուայ Նամախուոյ թաղի Հայոց եկեղեցական երկսեռ ուսումնարանին՝ եթէ բացցի, երկու հարիւր րուբլի արծ. (200 ր.)։

7, Ցօգուստ պարտուց սրբոյն Յակոբայ Վանից Հայոց երուսաղէմի մի հարիւր րուբլի արծաթոյ (100 ր.)։

8, Երկուց ուսումնարանաց Հայոց Ղուբայ քաղաքի և Փիլիպոս գեղջ իւրաքանչիւրոյն մի մի հարիւր րուբլի արծ. ընդ ամենայն երկու հարիւր րուբլի (200 ր.)։

9, Ի նպաստ պարտուց Սուրբ Աստուածածնայ հին եկեղեցւոյն Հայոց Բագուայ գոյացելոց ի ժամանակի վերանորոգութեան արտաքին և ներքին պակասութեանց նորին հինգ հարիւր րուբլի արծ. (500 ր.)։

10. Երկուց գոտերաց հանգուցեալ քեռւոյն իմոյ Ղևոնդի Բառահեանց՝ Կաւրնի և Լիզայի իւրաքանչիւրոցն երկու հարիւր յիսուն րուբլի արծաթոյ, ընդ ամենայն հինգ հարիւր րուբլի արծաթոյ (500 ր.)։ Զյիշեալ գումարն յանձնեմ վերոյիշեալ եղբարց իմոց և որդւոցս՝ դնել ի շահեկանութեան, և ոչ՝ինմանէ ստացեալ տոկոսին յանձնել յիւրաքանչիւր ամի յիշեալ որբոց ի կառավարութիւն՝ մինչ ցամաննանալն իւրեանց, իսկ ի ժամանակի ամուսնութեան նոցա՝ տալ իւրաքանչիւրոց զնշանակեալ մայր գումարն իբրև օժիտ (բաժին) հարանութեանն։

11. Երկու գաւերց ազգականին իմոյ հանգուցեալ Յովհաննէսի Շարաքադեանց՝ Աննայի և Սօֆիայի իւրաքանչիւրացն տալ ի ժամ հարանութեան իբրև օժիտ (բաժին) երկու հարիւր յիսուն րուբլի արծաթոյ, ընդ ամենայն հինգ հարիւր րուբլի արծաթոյ (500 ր.)։

12. Երից հարազատ քեռց իմոց՝ Զաւալարպի, Սօնայի և Զամբաղի իւրաքանչիւրոցն երկու երկու հարիւր րուբլի արծաթոյ ընդ ամենայն վեց հարիւր րուբլի արծաթոյ (600 ր.), ոչ թէ ըստ կարօտութեան նոցա, որք միայն Աստուծոյ են անկարօտ և յապահով միճակի, այլ վասն անմոռաց պահելոյ ի միտս իւրեանց զիս, զեղբայրական սէր և զյիշատակ իմ։

13. Պատուիրեմ եղբարց իմոց և որդւոցս և համայն ընտանեաց մերոց խնամել և պահպանել զՎարբանդաբնակչուհի Սրբուհի Սօնայն մինչև ցամաննանալն իւր ի տան մեր այնպէս որպէս մինչև ցարդ պահպանեալ է ընդ հավանաւորութեամբ մերով ի բարի խնամս, և ի ժամ հարանութեան նորա տալ նմա իբրև օժիտ երեք հարիւր րուբլի արծ. (300 ր.)։

14. Ա յրի կնոջ Մարիամու Բուդաղեանց երկու հարիւր րուբ. արծ. (200 ր.)։

Երրորդ, ոչ ոք յեղբարց և կամ յորդւոց իմոց իշխեսցէ վէճ յարուցանել և կամ հակառակիլ այսմ կտակի իմոյ, որ պարտ է կատարել ամենայն սրբութեամբ զկնի փոխելոյն իմոյ աստի առ Աստուած, որում փառք յաւիտեանս ամէն։

Զայս կտակ արարեալ ըստ կատարեալ բանականութեան, ըստ առողջ մտաց և դատողութեան իմոյ՝ ստորագրեմ սեպհական ձեռամբ իմով յերեքն Ապրելի հազար ուխտն հարիւր ուխտսուն և հինգ ամի. ի Բագու։

Թադէոս աւագ քահանայ Բուդաղեանց։

Սոյն կոտակիս վիայեմ Համբարձում՝ Բէգ Իւզբաշեանց։
» » » Մինաս Մելիքեանց։
» » » Համբարձում՝ Տէր Ասատուածատրեանց։

Զայս կոտակ ըստ բանիդ կոտակարար Թադէոս աւագ քահանայի Բուզաղեանց յօրինեալ պարզագրեցի Խորէն քահանայ Մխրզաթէգեանց»։

Կովկասու քաղաքական մասին կառավարչապետի յանուն Ամենապատիւ Նախագահի Սինօդի Սրբոյ Էջմիածնի Տ. Մկրտիչ Սրբազան Արքեպիսկոպոսի ուղղեալ յ3-ն ամսոյս № 5639 գրութեան ի կատարումն՝ արտատպում ենք «Նոր Դար» լրագրի 41 համարում տպած Ռուս Կովկազ լրագրի յօդուածի թարգմանութիւնը Հայ Հոգևոր դպրոցների մասին՝ որի առթիւ գրուած է Արարատի Մարտ ամսատետրակում։

«Ներկայումս տէրութեան կարգադրութեամբ փակվում են բոլոր այն Հայոց ծխական ուսումնարանները, որոնց վարչութիւնը չէ ուզում կատարել այդ ուսումնարանների համար տէրութիւնից դրուած կանոնները։ Որովհետև այս տեսակ ուսումնարանների փակուելու առթիւ հասարակութեան մէջ դիտմամբ տարածվում են անճիշդ լուրեր, ուստի հետևեալ ծանուցումը տալիս է պարզելու ներկայ հանգամանքը և ցոյց տալու իսկական պատճառները, որոնք ստիպեցին տէրութեան դիմելու վերոդրեալ ցաւալի միջոցին։

1873 թ. Նոյեմբերի 22-ին Բարձրագոյն հաստատուած Պետական խորհրդարանի կարծիքով՝ Կովկասում և Անդրկովկասում ուսումնարանական մասի կազմակերպութեան համար կարգադրուած է, որ բոլոր տէրութենական գաւառական և սկզբնական ուսումնարանների, նաև հասարակական և մասնաւոր դպրոցների կառավարութիւնը, նոյնպէս այլազգեան ծխական դպրոցների վերայ հսկողութիւնը յանձնուին Ժողովրդական ուսումնարանների վերատեսուչներին և տեսուչներին։ Սորա հետ յիշեալ բոլոր ուսումնարանների վերայ պէտք է տարածուին Կայսերութեան մէջ ներդործող այն օրէնքները, որ պարտաւորացնում են աւանդել ռուսաց լեզուն բոլոր ուսումնարաններում և ռուսաց պատմութիւնն ու Ռուսաց Կայսերութեան աշխարհագրութիւնը այն տեղերում, ուր ուսուցանում են առհասարակ պատմութիւն և աշխարհագրութիւն։ Այս Բարձրագոյն հրամանը կատարելու միջոցին առաջ եկան մի քանի թիւրիմացութիւններ հայ լուսաւորչական բարձր հոգևոր իշխանութեան և Կովկասի գլխաւոր վարչութեան մէջ։ Ապագայում այս թիւրիմացութիւնների առաջն առնելու համար ներքին գործոց նախարարի ամ-

Նահպատակ գնկուցման առթիւ Թագաւոր Կայսրը 19 Յուլիսի 1874 Թ. Բարձրագոյն բարեհաճեց հաստատել իրեւ հրահանգ ԹԷ Հայ լուսաւորչական Հոգեւոր իշխանութեան և ԹԷ Ժողովրդական ուսումնարանների տեսուչների համար հետեւեալ կարգերը։

1) Համաձայն 975 յօդ. XI հատ. 1 մ. օր. Ժող., Հայ լուսաւորչական Հոգեւոր իշխանութեան պարտաւորութիւնն է՝ հիմնել ծխական դպրոցներ և նոցա կառավարել, նոյնպէս հոգալ մտցնելու կանոնաւոր և յարմար դասաւանդութեան եղանակ և պահպանել բարոյականութիւն ուսանողների և ուսուցիչների մէջ։

2) Ժողովրդական ուսումնարանների տեսուչների պարտաւորութիւնն է՝ վերաբերութեամբ հիմնուող և Հայոց Հոգեւոր իշխանութեան ձեռքով կառավարուող ընդհանուր կրթողական ծխական ուսումնարանների, բարձրագոյն հաստատուած 22 Նոյեմբերի 1873 Թ. Պետական խորհրդարանի կարծիքի զօրութեամբ,—հսկել՝ 1) որ բոլոր ուսումնարաններում աւանդուի ռուսաց լեզուն, իսկ այն ուսումնարաններում, ուր ուսուցանում են ընդհանուր պատմութիւն և աշխարհագրութիւն,—աւանդուին ռուսաց պատմութիւնն ու աշխարհագրութիւնը ռուսերէն լեզուով. 2) որ այդ ուսումնարաններում ուսուցիչները լինին ռուսաց հպատակներ պարտ ու պատշաճ բարոյականութեամբ։ Իսկ տեսուչներին իրաւունք չէ տուած խառնուելու ուսումնարանների տնտեսական մասի մէջ կամ սոցա վերաստուգելու. 3) այն ուսումնարանները, որոց նպատակն է պատրաստել եկեղեցական պաշտօնեայք, Ժողովրդական տեսուչների հսկողութեան չեն ենթարկվում և մնում են Հոգեւոր իշխանութեան բացառական կառավարութեան տակ։ Այս տեսակ ուսումնարանների դասընթացը և նոցա ներքին կարգի մասին կանոնները պէտք է ներկայացնուին ի հաստատութիւն Բարձրագոյն վարչութեան (յօդ. 1004)։

Սորա հետ Թագաւոր Կայսրը բարեհաճեց հրամայել, որ համաձայն վերոգրեալ բացատրութեան, Կաթողիկոսը իւր կողմից անյապաղ պարտ ու պատշաճ կարգադրութիւն անէ որ Հայոց Հոգեւոր իշխանութեան կառավարութեան ներքոյ գտնուող ընդհանուր կրթողական ծխական ուսումնարանները ենթարկուին վերոյիշեալ հիմանց վերայ, Ժողովրդական ուսումնարանների տեսուչների հսկողութեան և որ սոցա հաղորդուի այդ ուսումնարանների ցուցակը նոյնպէս պարտաւորացնել նշանակուած թեմական վերատեսուչներին որ իւրեանցից կախուած օգնութիւնը հասցնեն Ժողովրդական ուսումնարանների տեսուչներին, որպէս զի սորա կատարին իւրեանց վերայ դրուած պարտականութիւնը։

Վերոգրեալ կանոններից երեւում է որ՝

ա) Հայոց Հոգեւոր իշխանութիւնը պարտաւոր էր նոր բացուելիք և փակուելիք ուսումնարանների մասին իսկոյն սոցա բացուելուց և փակուելուց յետոյ յայտնել ուսումնարանական վարչութեան, որովհետև հակառակ դէպքում նոր բացուած ուսումնարանները կարող են մնալ առանց հսկողութեան շատ

թէ փոքր ժամանակուայ ընթացքում, կամ թէ փակուած ուսումնարանների վերաստուգութեան համար ուսումնարանական վարչութեան անձինք պարտաւորած կլինէին իւրաքանչիւր տեղը ճանապարհորդութիւն անել։

բ) Հայոց հոգևոր իշխանութիւնը պարտաւոր էր տեղեկութիւն տալ ուսումնարաններում նոր նշանակուած ուսուցիչների մասին ցոյց տալով նոցա բնակութեան տեղը, մինչև ուսուցչութեան պաշտօն ստանալը, և նոցա կրթական ցենզը, որովհետև առանց այդ տեղեկութեան ուսումնարանական վարչութեան անձինքն անկարող կլինէին ուսուցիչների հպատակութեան և բարոյականութեան մասին տեղեկութիւն հաւաքել։

Ներքին գործոց նախարարութիւնը, իւր գրութեան մէջ 20 ին Ապրիլի 1876 թ. № 1481, Փոխարքայի Գլխաւոր Վարչութեան Կառավարչին նոյնպէս բացատրած է որ 19 Յուլիսի 1874 թ. Բարձրագոյն հրամանի զօրութեամբ, Հայոց հոգևոր իշխանութիւնը պարտաւոր է հաղորդել ուսումնարանական վարչութեանը տեղեկութիւններ թէ՛ նոր բացուելիք ուսումնարանների և թէ՛ նոցա մէջ նոր նշանակուած ուսուցիչների մասին։

գ) Բացի սրանից Հայոց հոգևոր իշխանութիւնը պարտաւոր է հաղորդել Կովկասի ուսումնարանական վարչութեանը ընդհանուր կրթողական ծխական ուսումնարանների ցուցակը, որը հարկաւոր էր այն հանգամանքի առաջն առնելու համար, որ երբեմն Հայոց հոգևոր իշխանութիւնը թոյլ էր տալիս մտցնելու իւրեանց ծխական ուսումնարանների այն տեսակ ուսումնարանները, որոնք պահպանւում էին կամ մասնաւոր անձանց կամ հասարակութեանց հաշուով։ Այս տեսակ ուսումնարանները իհարկէ պէտք է մնային առհասարակ մասնաւոր կամ հասարակական ուսումնարանների կարգը և պէտք է որ ամբողջապէս ենթարկուած լինին ուսումնարանական վարչութեանը։

Ձը նայելով նորան որ 19 Յուլիսի 1874 թ. յիշեալ օրէնքով ուսումնարանական վարչութեանը տրւում էր շատ սահմանափակ հսկողութիւն Հայոց ծխական ուսումնարանների վերայ և որ ուսումնարանական կրթական կէտից ուսումնարանների վերայ դիտողութիւնը այդ օրէնքի զօրութեամբ ամբողջապէս մնում էր Հայոց հոգևոր իշխանութեան վերայ, այնու ամենայնիւ այս վերջինը զանց էր առնում հաղորդել ժողովրդական ուսումնարանների վերաբերեալ մինչև անգամ ամենակարևոր տեղեկութիւնները հաշուետուութեան համար թէ՛ այն անձանց մասին որոնք նշանակվում էին ուսուցչի պաշտօնով Հայոց դպրոցներում և թէ՛ հենց դպրոցների մասին։ Այսպէս ահա երբ ուսումնարանական վարչութեանը հարկաւոր եղաւ տեղեկութիւն ունենալ թէ Հայոց հոգևոր իշխանութեան ներքոյ գտնուած ուսումնարաններից որոնց նա համարում է հոգևոր և որքա՞ն չպէտք է ենթարկուին համաձայն 19 Յուլիսի 1874 թ. Բարձրագոյն հաստատուած կանոնների ուսումնարանական վարչութեան դիտողութեանն և որոնց համար ընդհանուր կրթողական և հետևաբար սորա հսկողութեանը ենթարկուող Կովկասի Փոխարքայի Գլխաւոր Վարչութեան նախկին կառավարիչը 21 Մարտի 1881 թ. դիմեց կաթուղիկոսին որ հաղորդուին նորան այդ տեղեկութիւն-

ները։ Նորին վեհափառութիւն 27 Մայիսի 1881 թ. № 252 գրութեամբ պատասխանեց, որ ներկայ օրինաց հիման վերայ ժողովրդական ուսումնարանների վերատեսուչների և տեսուչների դիտողութեանը չեն ենթարկվում էջմիածնայ հոգևոր ճեմարանը, հոգևոր դպրոցներն և եկեղեցական ուսումնարաններից նորա որոնց նպատակն է պատրաստել եկեղեցական պաշտօնեայք և որ Նորին Վեհափառութիւնը կարգադրել է որ թեմական առաջնորդները հաղորդեն Գլխաւոր վարչութեանը նորա ուզած տեղեկութիւնները։ Սակայն այդ տեղեկութիւնները ո՛չ այն ժամանակ և ո՛չ յետոյ թեմական առաջնորդները չեն հաղորդած։ Այն ինչ իսկապէս երևեցաւ որ մի քանի արական և մինչև անգամ իգական դպրոցներին, որոնք գլխաւորապէս պահպանվում էին հասարակութեան հաշուով և ունէին ընդհանուր կրթողական դասընթաց, դոցա հիմնադիրները և մինչև անգամ ինքը հոգևոր իշխանութիւնը հոգևոր դպրոցների անուն էին տուել, ուստի և այդ դպրոցները խուսափում էին ուսումնարանական վարչութեան հսկողութիւնից։ Մի թեմական առաջնորդն անգամ կարծում էր որ «ժողովրդական ուսումնարանների վերատեսուչները անկանոն են պահանջում Հայոց դպրոցների հոգաբարձուներից ուսանողների, ուսուցիչների թուի և այլ առարկաների մասին տեղեկութիւնները, և որ այդ տեղեկութիւնների հաւաքելը, յիշեալ անձի կարծիքով, նոցա իրաւունքի և պարտաւորութիւնների շրջանի մէջ չէ մտնում նոցա որովհետև թոյլ է տուած տեղեկանալու միայն՝ 1) աւանդվում է արդեօք ռուսաց լեզուն և ռուսաց պատմութիւն ու աշխարհագրութիւնը և 2) ուսուցիչները ռուսաց հպատակ են թէ ոչ»։ Սորանից աւելի նոքա, վերատեսուչները, եպիսկոպոսի կարծիքով, «ոչինչ բանի մէջ իրաւունք չունեին»։

Փողովրդական ուսումնարանների վերատեսուչների և տեսուչների և ուսումնարանական վարչութեան դիտողութիւնից երևեցաւ որ համարեա բոլոր Հայոց դպրոցներում պարտաւորեցուցիչ առարկաներից ռուսաց լեզուն անբաւարար էր մատակարարվում։

Այսպէս ուրեմն Հայոց հոգևոր իշխանութիւնը իւր կառավարութեան ներքոյ գտնուած դպրոցները ձգեց բոլորովին բացառական դրութեան մէջ, այնպիսի դրութեան մէջ, որի մէջ չէ գտնվում Կայսերութեան մէջ ոչ մի դաւանութեան դպրոց։ Բայց որովհետև 19 Յուլիսի 1874 թ. կանոնների հրատարակութեան օրից անցաւ մօտ 10 տարի, այն ինչ այլ ևս ոչինչ չէր կար այս կանոններով Հայոց դպրոցներն աւելի որոշ և հայ ժողովրդի և ռուսաց տէրութեան օգտին համապատասխան դրութեան վերայ դնելու, ուստի Թագաւոր Կայսրը 16 Փետրուարի անցեալ 1884 թ. բարեհաճեց հաստատել՝ իբրև 22 Նոյեմբերի 1873 թ. օրէնքի, հայ լուսաւորչադաւան ծխական դպրոցների մասին Կովկասում նոր կանոններ։

Այս կանոնների նպատակն է, նախ և առաջ՝ հաստատել ճիշտ հսկողութիւն ծխական դպրոցների մասին և հանել հոգևոր իշխանութեան կառավարութիւնից այն ուսումնարանները, որոնք բացառապէս ենթարկվում

են Ազգային լուսաւորութեան նախարարութեան հսկողութեանը, այսինքն այն ուսումնարանները, որոնց դասընթացը տարրական ուսումնարանների դասաւանդութեան ծաւալից աւելի է, և որոնք Կայսերութեան բոլոր վարչութեանց մէջ ենթարկուած են բացառապէս ուսումնարանական վարչութեանը, և երկրորդ՝ որոշել թէ տեղական հայ լուսաւորչական հոգևոր իշխանութեան և թէ Ազգային լուսաւորութեան նախարարութեան ներկայացուցիչների յարաբերութիւնը դէպի ծխական դպրոցները։ Թեմակալ առաջնորդներին իրաւունք է տուած ոչ թէ միայն հսկել այդ դպրոցների վրայ տնտեսական-վարչական և մանկավարժական կողմից թէ անձամբ և թէ առանձին վերատեսչի միջնորդութեամբ, որ եկեղեցական դասից պէտք է լինի, այլ և ունին իրաւունք նշանակել և հրաժարեցնել ուսուցիչներին, բացել և փակել այդ դպրոցներն այն պարագաւորութեամբ, որ նա այս վերջին կարգադրութեանց մասին հաղորդէ ի գիտութիւն Կովկասի ուսումնարանական շրջանի Հոգաբարձուի։ Ազգային լուսաւորութեան նախարարութեան տեղական օրգանները պէտք է հսկեն բոլոր առարկաների դասատուութեան վրայ, բացի կրօնից, պէտք է պահանջեն, որ ռուսաց լեզուն աւանդուի պարտաւորեցուիչ բոլոր դպրոցներում, իսկ նոցա մէջ, որտեղ աւանդվում են պատմութիւն և աշխարհագրութիւն,—ռուսաց պատմութիւնը և ռուսաց աշխարհագրութիւնը աւանդուին ռուսաց լեզուով։ Ուսումնարանական շրջանի Հոգաբարձուին իրաւունք է տուած դիմել հոգևոր իշխանութեանը, կարևաւոր դէպքում, հրաժարեցնել այնպիսի ուսուցիչներին, որոնց գործունէութիւնը որ և է կերպով անհամապատասխան կհամարուի նոցա կոչմանը։

Վերոյիշեալ կանոնները յայտարարած էին հրամանաւ Կառավարող Սինոդի 6 Ապրիլի նոյն 1884 թ. և Գլխաւոր կառավարիչը քաղաքային մասի Կովկասում հաղորդած է Էջմիածնայ հայ լուսաւորչական Սինոդին առաջարկելու դոցա թեմակալ առաջնորդներին ի գործադրութիւն և ի հրահանգ։ Ըստ Սինոդը, յայտնելով որ նա իրաւունք չունի ընդունել այդ օրէնքը ի գործադրութիւն, որովհետև Հայոց դպրոցների վերաբերութեամբ որև է կարգադրութիւն անելու իրաւունքը պատկանում է միմիայն կաթուղիկոսին, և առաջի առնելով կաթողիկոսական գահի թափուր մնալը, միջնորդեց որ հրատարակուած կանոնների գործադրութիւնը մնայ մինչև հայ եկեղեցւոյ Վեհափառի ընտրութիւնը։ Այս միջնորդութիւնը, չը նայելով որ երկու անգամ կրկնուեցաւ, բոլորովին մերժուած էր, իբրև անհամապատասխան Տէրութեան սորա մասին ունեցած հիմնական օրինաց. սորա հետ Սինոդին բացատրած էր՝

ա, որ 945 յօդ. մ. 1, հատ XI օր. ժող. իսկական մտքով Էջմիածնայ պատրիարքական աթոռի դատարկութեան միջոցին Էջմիածնայ Սինոդի վճռին չեն կարող ենթարկուիլ միայն ը-ոփ հոգևոր գործերը։

բ, որ 16 Փետրուարի վերոյիշեալ կանոնների գործադրութեան մասին կարգադրութիւնը այդ տեսակ գործերին անկարելի է վերաբերել, որովհետև այդ կանոնները հիատարակուած են ըստ բացատրութեան Կառավարող Սի-

նատի միայն և եթէ իւրաքանչիւր ուսումնարանների մասին Նովկասում ներգործող օրէնքի (8 կ. Բարէբարգին հաստատուած 22 Նոյեմբերի 1873 թ. Պետական խորհրդարանի կարծիքի Կայսերութեան ուսումնարանների ընդհանուր կանոնադրութեանց գործադրութեան մասին Նովկասի ուսումնարաններում) և

գ. որ իւրաքանչիւր օրէնք, Հիմն. Օրինաց 59 և 63 յօդուածների մըտքով (Հատ I, օր. ժող.) նորա ըստ պատշաճաւոր յայտարարութիւնից յետոյ ուրբ և անբակտելի պէտք է գործադրուի ամենքի և ամեն մէկի կողմից։

Սակայն սորանից յետոյ էլ հան լուսաւորչական Սինօդը իւրեան իրաւունք համարեց չկատարել Բարձրագոյն հրամանը և սորա տեղը յանձնեց Աստրախանի Թեմական պաշտօնակատար Սուրիաս եպիսկոպոս Պարզեանցին որ այս Ս. Պետերբուրգում անձամբ նորոգէ Սինօդի նախկին երկու միջնորդութիւնները 16 Փետրուարի կանոնների գործադրութիւնը կանգնացնելու մասին։ Ցանուն ներքին գործոց նախարարի տուած հաղորդագրութեան մէջ նորից ցոյց էր տուած Սինօդի անձեռնհասութիւնը դպրոցների գործերի մէջ և ի միջի այլոց յիշուած էր որ Հայոց դպրոցներ անձամբ կառավարելու Կաթուղիկոսի իրաւունքը հիմնուած է Հայոց եկեղեցւոյ կանոնների վերայ, որ սրբազործուած է վերջին ժամանակներում և ուսաց օրէնսդրութեամբ։

Եւ այս միջնորդութիւնը, ի հարկէ, ցերութիւնը անկատար թողեց. մանաւանդ ևս որ վերոգրեալ առիթները սոցա ստուգելուց յետոյ, բոլորովին անհիմն գտնուեցան։ Ա յսպէս Հանգուցեալ Գէորգ IV Կաթուղիկոսը 1873 թ. հրատարակած կոնդակի մէջ յիշում է որ Հայոց եկեղեցւոյ կանոններով և և աւանդութեամբ թեմական առաջնորդները և սոցա յաջորդները պարտաւոր են հոգալ թեմական և ծխական ուսումնարանների բարեկարգութեան և յառաջադիմութեան մասին և հոկել նոցա վերայ, աւելացնելով որ այս առաջարկութիւնը գրուած է և Հայոց եկեղեցւոյ մասին հրատարակուած 1836 թ. կանոնադրութեան (պօլօժենիայի) մէջ, այսինքն 66 յօդուածում (այժմ 975 յօդ. մ. 1, Հատ XI, օր. ժող.)։ Ինչ որ վերաբերում է մեր օրէնսդրութեանը, սորա մէջ որոշուած է, որ Կաթուղիկոսի վերջնական վճռին առաջադրւում են միմիայն ըստ հոգեւոր գործերը, որոնք վերաբերում են հաւատոյ ուսմանը, աստուածպաշտութեան կատարմանը և այլն (յօդ. 929 նոյն հատորի և մասի)։ Իսկ Սինօդը վերահսկում է իւրեան ենթարկուող բոլոր վարչութեանց և պաշտօնական անձանց գործունէութեան վերայ (յօդ. 938)։ Ի միջի այլոց, բնականապէս և եպիսկոպոսների վերայ։ Վերոյիշեալ 475 յօդ. ուսումնարանական գործերը ուղիղ վերաբերում է թեմական առաջնորդների գործունէութեան շրջանին, որոնք, ըստ 975 յօդ. Սինօդին ներկայացնում են թեմերի կառավարութեան միջոցին իւրեանց գործունէութեան հաշիւը, սորա հետ և ուսումնարանների կառավարութեան հաշիւները, իսկ 1003 յօդ. ենթարկում Կաթուղիկոսի գլխաւոր կառավարութեանը Էջմիածնայ հոգևոր ճեմարանը, մինչև անգամ հոգևոր գպրա-

բանոցները այդ յօդուածով կախուած են եպիսկոպոսից, որի թեմում գտնվում են այդ դպրանոցները։

Աչքի առաջ ունենալով որ Հայ լուսաւորչական Սինօդը շարունակ ջանց էր առնում կատարել ամենքի համար պարտաւորեցուցիչ և նորան յայտնած 16 Փետրուարի 1884 թ. Բարձրագոյն հրամանը, կառավարութիւնը հարկաւոր համարեց աւելի որոշ միջոցների դիմել, որպէս զի գործադրուին Հայոց ծխական դպրոցների համար հրատարակուած նոր կանոնները։ Այս մասին հետևացած Բարձրագոյն հրամանները կատարելու համար, Գլխաւոր կառավարիչը քաղաքային մասի Կովկասում անցեալ Փետրուարի 8 ին ուղարկեց Էջմիածնայ Սինօդին Ս. Պետերբուրգից հետևեալ հեռագիրը՝

«Բարձրագոյն հրամանաւ առաջարկում եմ Սինօդին անյապաղ հաղորդել բոլոր թեմակալ առաջնորդներին ի գործադրութիւն և ի հրահանգ 16 Փետրուարի կանոնները ծխական ուսումնարանների մասին. եթէ այս կանոնները այս առաջարկութիւնը ստանալուց յետոյ երկու շաբաթուայ ընթացքում չեն գործադրուիլ, անյապաղ կը կարգադրուի փակել այն դպրոցները, որոնք չեն կատարիլ ուսումնարանական վարչութեան օրինական պահանջները»։

Այս հեռագրի պատճէնը միևնոյն ժամանակ ուղարկուած է Կովկասի բոլոր թեմակալ առաջնորդներին և կառավարութեան ձեռնարկած վճռի մասին յայտնուեցաւ թէ Կովկասի ուսումնարանական շրջանի Հոգաբարձուին և թէ երկրիս առանձին վարչական մասերի կառավարիչներին որպէս զի սոքա հարկաւոր դէպքում համապատասխան կարգադրութիւններ անեն։

Գլխաւոր կառավարչի քաղաքային մասի Կովկասում վերադիրեալ հեռագրին Էջմիածնայ Սինօդը 22 Փետրուարի ուղարկեց անուղղակի պատասխան։ Որովհետև այդ միջոցին արդէն անցել էր Փետրուարի 16 1884 թ. կանոնների գործադրելու համար տուած երկու շաբաթ ժամանակը, ուստի կարգադրուեցաւ փակել այն ծխական Հայոց դպրոցները, որոնք չեն ընդունիլ ի հրահանգ այդ կանոնները։

Մինչև այժմ ունեցած տեղեկութիւններից Հայոց դպրոցներից, որոնք մերժեցին ենթարկուիլ 16 Փետրուարի անցեալ ամի պահանջներին, փակուեցան՝ Թիֆլիսում՝ Ս. Գայիանեան օրիորդական ուսումնարանը և տասն և չորս դպրոցներ և, բացի սորանից, Էչմիածնայ Նահանգի մի քանի դպրոցները։

Աչքի առաջ ունենալով թէ ուսումնարանական վարչութեան Հայոց դպրոցների մէջ ճիշդ յարաբերութիւն հաստատելու անհրաժեշտ կարևորութիւնը և թէ Հայ ժողովրդի կրթութեան օգուտը, որ կառավարութեան համար միշտ թանկագին է, ուստի հրատարակուած էին 16 Փետրուարի 1884 թ. լրացուցիչ կանոնները։ Այս կանոններով բոլորովին չի պակասում Հայոց հոգևոր իշխանութեան իրաւունքը դպրոցների կառավարելու մասին, միայն տեղական ուսումնարանական վարչութեան դրուած է պարտականութիւն՝ հսկել նոցա մէջ աւանդուող բոլոր առարկաների վերայ, բացի կրօնից, նշանակել և պահանջել հարկաւոր դէպքում հրաժարեցնել այն ուսու-

ցիչներին, որոնց գործունէութիւնը անհամապատասխան երևար նոցա կոչմանը։

Ա յս կանոնները ոչ թէ միայն համաձայն են ռուսաստանի բոլոր ուրիշ պետական ուսումնարանների համար եղած կարգադրութիւններն պէտ և հայ լուսաւորչական հոգևոր իշխանութեանը տալիս են մեծամեծ իրաւունքներ համեմատելով այն իրաւունքների հետ, որոնցից օգուտ են քաղում միւս պետական եկեղեցիք։ Էջմիածնայ Սինօդը՝ 16 Փետրուարի կանոնների դրծադրութեան մարժումը ինչպես վերև յիշուեցաւ, հիմնում է անկանոն բացատրութեան վերայ իբր թէ Հայոց դպրոցների մասին որև է կարգադրութիւն անելու իրաւունքը պատկանում է միայն կաթուղիկոսին և թէ այդ իրաւունքը ստանում է իւր զօրութիւնը Հայոց եկեղեցւոյ կանոններից, որոնք սրբագործուած են յետագայ ժամանակներում Ռուսաց օրէնսդրութիւններով։ Ա յն ինչ յայտնի է, որ վերհափառ կաթուղիկոսին պատկանում է վճռող ական ձայն միայն հոգևոր նշանակութիւն ունեցող գործերի մէջ, որոնք 945 յօդ. հատ. 1, օր. ժող. զօրութեամբ իրաւ չեն կարող վճռուիլ առանց կաթուղիկոսի հաստատութեան. իսկ Սինօդը որ կազմուած է 11 մարտի 1836 թ. Բարձրագոյն հրամանաւ իբրև Ռուսաց Կայսերութեան վարչութիւն, նորա օրգանն է, ուստի նա ներգործուած է Հայոց լուսաւորչական եկեղեցւոյ գործերում, 940 յօդ. նոյն թուականի և հատորի հիման վերայ՝ կառավարող Սենատին, Կովկասի փոխարքային (այժմ գլխաւոր կառավարիչ քաղաքային մասի Կովկասում) և ներքին գործոց նախարարութեան ի շարս միւս պետական բարձագոյն հոգևոր վարչութիւնների, ինչպէս այդ բառացի յայտնուած է օրէնքի մէջ։ Ինչ որ վերաբերում է եկեղեցական կանոններին, որոց վերայ մատնացոյց է լինում Հայոց հոգևորականութիւնը, կաթուղիկոսի և Սինօդի Հայոց ուսումնարանների կառավարութեան իրաւունքները որոշելու ժամանակ, այդ կանոնները նոյն իսկ Հայոց հոգևորականութեան խօսքերով հաստատուած են ռուսաց օրէնսդրութեամբ, 11 Մարտի 1836 թ. Բարձրագոյն հրամանից յետոյ, որ որոշում է Ռուսաստանում Հայ լուսաւորչական եկեղեցւոյ օրինադրութիւնը, այս եկեղեցւոյ համար ոչ մի նոր եկեղեցական կանոն, որ անհամաձայն լինէր ռուսաց Կայսերութեան օրինաց ակներև է որ հրատարակուած չէր կարող լինել։ Ուստի Էջմիածնայ Սինօդը բոլորովին հիմք չունէր հրաժարուել մտցնելու ի գործադրութիւն Հայոց դպրոցների մէջ 16 Փետրուարի 1884 թ. կանոնները, որոնք Բարձրագոյն հաստատուած էին և յետաձգել նոցա գործադրութիւն մինչև նոր կաթուղիկոսի ընտրութիւնը։ Ա յս պատճառաւ չափազանց միջոցների գործադրութեան հետևանքը, որին ցաւելով կառավարութիւնը ստիպուած էր այժմ դիմել Էջմիածնայ Սինօդի անկանոն միջնորդութեան պատճառաւ, ամբողջապէս պէտք է ընկնի այդ վարչութեան պատասխանատուութեան վերայ։

Հայոց հոգևոր իշխանութիւնը մարժելով 16 Փետրուարի 1884 թ. կանոնների գործադրութիւնը, ինքնակամ հրաժարուեցաւ նորա վերայ դրած

բարձր պարտականութիւնից կատարել ծխական դպրոցները։ Նոցանից շատերը գլխաւորապէս պահպանվում էին հասարակութիւնների հաշուով՝ ուստի եթէ այս վերջինները ցանկանան իւրեանց զաւակների օգտի համար, միջնորդել տեղական ուսումնարանական վարչութեան առաջ բացանել ի տեղի փակուած կամ փակուելիք դպրոցների, մասնաւոր ուսումնարանները ընդհանուր հիմանց վերայ, այդ տեսակ ուսումնարանները կարող են բացուել իբրև 2 րդ 3 րդ և մինչև անգամ 1 ին կարգի ուսումնարաններ։ Առաջին տեսակ ուսումնարանները իւրեանց դասընթացով համապատասխան են սկզբնական ուսումնարաններին մի և երկու դասարանով, 2 ը պրօգիմնազիային և 3 ը գիմնազիային։ Դաստատութիւնը կարող է լինել և Հայոց լեզուով հաւանութիւն ստացած դասագրքերով, միայն պահպանելով թէ ռուսաց լեզուի ուսուցման և թէ ռուսաց պատմութեան և ռուսաց աշխարհագրութեան մասին պահանջած պայմանները։

Անտարակոյս այդ տեսակ ուսումնարանների կազմակերպութեան մասին կը հոգայ Հայ հասարակութեան այն ողջամիտ մասը որին թանկագին է նոր սերունդի լաւ ապագան և որը հաւատարիմ է տէրութեան և յարգում է պետութեան օրէնքները։

Սանասարեան Վարժարան

Ի ԳԱՂԹԻՆ

ՑԱՑՑԱԳԻՐ 1885—86 ՎԱՐԺԱՐԱՆԱԿԱՆ ՏԱՐՒՈՑ

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ վարժարանը, 1881 թուին հիմնարկուած Կարին քաղաքում Մկրտիչ Սարգսեան Սանասարեանի ծախքով, ունի Գերմանացւոց ԿՐԹԱՐԱՆ (Erzeihungsschule) կոչուած Միջնակարգ Վարժարաններուն համահաւասար աստիճան, և անոնց պէս իննամեայ ընթացք։ Կը բաղկանայ Նախակրթարանէ, որ կը պարունակէ երեք դասարաններ (Ա. էն մինչև Գ.), և Կրթարանէ, որ կը պարունակէ վեց դասարաններ (Դ. էն մինչև Թ.)։ Ապագային պիտի բացուի նաև մի մանրագիտական շրջան եռամեայ ընթացքով։

Նախակրթարանում կաւանդուին հետևեալ առարկաները.

1. Կրօն (Ընդարձակ Պատմութիւն), 2. Պատմութիւն, 3. Բնագիտութիւն, 4. Աշխարհագրութիւն, 5. Հայերէն Աշխարհաբառ, 6. Տառագիտութիւն, 7. Թուաբանութիւն, 8. Գեղագրութիւն, 9. Գծագրութիւն, 10. երաժշտութիւն ձայնական, 11. Մարմնամարզ եւ Զմխկութիւն, 12. Պարտիզպանութիւն։

Կրթարանում կաւանդուին հետևեալ առարկաները։

1· Կրօն (Սրբազան Պատմութիւն, Քրիստոնէական Վարդապետութիւն եւ Պատմութիւն Հայոց տատանեցոյց Ս· Եկեղեցւոյ)· 2· Պատմութիւն Ազգային, Օսմանեան եւ Ընդհանուր· 3· Բնագիտութիւն, (կենդանաբանութիւն, Բուսաբանութիւն, Հանքաբանութիւն, Երկրաբանութիւն, Բնաբանութիւն եւ Տարրաբանութիւն)· 4· Երկրաչափութիւն (Գծական, Աստեղաբաշխական, Քաղաքական եւ Վաճառականական)· 5· Հայերէն Շէյխուլհաւաս եւ Գրաբառ· 6· Տաճկերէն· 7· Գաղղիերէն· 8· Անգղիերէն – կամուտը· 9· Ուսողութիւն (Թուաբանութիւն Գրահաշիւ· երկրաչափութիւն, Եռանկիւնաչափութիւն եւ Տոմարակալութիւն)· 10· Գեղագրութիւն· 11· Գծագրութիւն եւ Նկարչութիւն· 12· Երաժշտութիւն Ձայնական· 13· Երաժշտութիւն Գործիական· (Պաշնակ եւ Ջութակ,– կամուտը· 14· Մարմնամարզ եւ Զմշկութիւն· 15· Պարտիզպանութիւն·

Վարժարանը ունի նաև Գործատուն, որի մէջ յարմարաւոր աշակերտք կը պարապին կազմարարութեամբ, ատաղձագործութեամբ, դմփագործութեամբ եւլն· Հիմնադիրը մտադիր է Գործատունը հետզհետէ ճոխացնել և վերածել կատարեալ Արհեստանոցի·

Վարժարանական տարին կսկսուի Սեպտեմբեր 1 ին·

Նոր (1885—86) վարժարանական տարուան մէջ Վարժարանը պիտի ունենայ Նախակրթարանի Ա· Բ· և Գ· դասարանները և Կրթարանի Գ· դասարանը·

Հիմնադրի ծախքով պիտի պահուին 40 ձրիավարժ դիշերօթիկ աշակերտներ· Թոշակաւոր դիշերօթիկ և ցերեկօթիկ աշակերտներ կընդունուին հետեւեալ պայմաններուն համաձայն·

1· Աշակերտներ կընդունուին Օգոստոսի 15 էն մինչև Սեպտեմբերի 1 ը·

2· Ընդունելի աշակերտին տարիքը լինելու է 7 էն վար և 11 էն վեր·

3· Ընդունելի աշակերտը բերելու է հետ ծննդեան ու մկրտութեան և պատուաստի վկայականներ·

4· Ընդունելի աշակերտը պէտք է լինի մարմնով առողջ և ի հարկին պիտի ենթարկուի բժշկական քննութեան·

5· Դիշերօթիկ աշակերտները վճարելու են կանխիկ·

Մուտքի համար միանուագ	3	Օսմանեան ոսկի
Նախակրթարանի համար, տարեկան	18	» «
Կրթարանի համար, տարեկան	20	» »

6· Ցերեկօթիկ աշակերտները վճարելու են կանխիկ·

Նախակրթարանի համար, տարեկան	10	Օսմանեան ոսկի

7· Դիշերօթիկ և ցերեկօթիկ աշակերտները կէս Օսմանեան ոսկի ևս վճարելու են կանխիկ չուշկի համար·

8· Գործական Երաժշտութիւն սովորիլ ցանկացողները իրենց մասնաւոր տուրք վճարելու են կանխիկ տարեկան 3 Օսմանեան ոսկի· Ջութակ սովորողները պարտաւոր են նաև Հոգալ գործին·

9· Դիշերօթիկներու տարեկան վճարը կպարունակէ իր մէջ ուսումնական և նիւթական բոլոր ծախքերը· այն է ուսում, սնունդ, Հագուստ և ամէն տեսակ առողջապահական խնամք· Ծնողք ստանձնելու չեն ուրիշ որ և է

ծախք, և աշակերտք Վարժարան ընդունուելու առեն իսկ լերելու չեն իրենց հետ ո և է իրեղէն։

10· Ցերեկօթիներու տարեկան վճարը կպարունակէ միայն ուսումնական ծախքերը և ցերեկուան ճաշը։

11· Ցերեկօթիկներու զգեստը ծնողք հոգալու են Վարժարանի համազգեստին համաձայն։

12· Աշակերտները նախակրթարանի կամ կրթարանի ընթացքը սկսելէն վերջը պարտաւոր են շարունակել զայն մինչև ցաւարտ։

13· Եթէ տարուան ընթացքում աշակերտը հիւանդութեան կամ ուրիշ որ և է ստիպողական պատճառով բացակայ լինի Վարժարանէն, տրուած տարեկան վճարը չկրնար յետ պահանջուիլ ծնողքի կողմէն։

14· Վարժարանին երկամեայ արձակուրդին, որ տեղի կունենայ Յուլիս և Օգոստոս ամիսներուն, ծնողք, եթէ ուզեն, կարող են տուն տանիլ իրենց զաւակները, բայց երթևեկութեան ծախքը իրենց վրայ է։ Իսկ Վարժարանում մնացողներուն համար յատուկ վճար չպահանջուիր։

15· Աշակերտ տալ ցանկացողները ըստ կարելւոյն կանուխ ծանուցանելու են իրենց որոշումը Վարժարանի Տեսչութեան։

Կարին Մայիս 1883

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ
ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Վարժարանին վերաբերեալ նամակներ ուղղուելու են։

Առ Տեսչութիւն Սանասարեան Վարժարանի ի Կարին։

مدرسة سانسارسانس مدیرلیغنه مکتوبلرك ارسالی

Direction du Collège Sanassarean — ERZEROUM, Turquie d' Asie.

ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ։

Առաջիկայ Օգոստոս $^1/_{20}$ Յուլիսին, ԱՐՄԷՆԻԱ անուն հայերէն մի լրագիր պիտի հրատարակուի Մարսէյլի մէջ, շաբաթին երկու անգամ՝ համաձայնութեամբ Ֆէլիքս Անճանտէնի և խմբագրութեամբ Մ. Փորթուգալեանի, տարեկան բաժանորդագինն է 10 րուբլ. թղթադրամ։ Խմբագրութիւնն լինք կը վճարէ վեստակի ծախքը։

ԱՐՄԷՆԻԱՅի շրջաբերական Յայտարարութիւնը Յբեապէս կը զրկուի եթէ ցանկացող լինի իմանալու այդ լրագրի նպատակը, ուղղութիւնը և պայմանները։ Կարելի է դիմել խմբագրութեանը, ֆրանսերէն հետևեալ հասցէով. M. Portoukalian, Rédacteur du journal ARMENIE, rue Arménie, 2 (Hôtel Forer), MARSEILLE (France),

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ։